

18980

Վ. ՊԻԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ,
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ,
ՌԵԱԿՑԻԱՅԻ ՅԵՎ ՏԵՌՈՐԻ

327.3

7-58

ԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

15 JAN 2010
27 SEP 2006

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՅՄԲ

327.3

7-58

ար

Վ. ՊԻԿ

**Մ Ի Զ Ա Չ Գ Ա Յ Ի Ն
Հ Ա Մ Ե Ր Ա Շ Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ը Ն Դ Դ Ե Մ Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ի,
Ռ Ե Ա Կ Ց Ի Ա Յ Ի Յ Ե Վ Տ Ե Ռ Ո Ր Ի**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

22 JUL 2013

18980

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ի մպերիալիստական յերկրորդ պատերազմն սպառնում է իր հորձանուտի մեջ առնել աշխարհի բոլոր ժողովուրդներին: Նա պատրաստ է սրբելու այն ամենը, ինչ կանգնած է իր ճանապարհին:

Ի մպերիալիստական յերկրորդ պատերազմը աշխարհի նոր վերարաժանման պատերազմ է: Այդ պատերազմ է ընդդեմ մայր յերկրի, դադութների ու կիսադադութների աշխատավորութան, պատերազմ ընդդեմ բանվոր դասակարգի և նրա հեղափոխական ավանգարդ կոմունիստական կուսակցությունների:

Դա ֆինանսական կապիտալի ամենառեակցիոն, շովինիստական ու տեռորիստական տարրերի պատերազմն է ընդդեմ առաջադեմ մարդկութան:

Այդ պատերազմը մի պատրվակ է ռեակցիայի նոր արշավանքի համար, ամենադաժան տեռորի համար ընդդեմ ազատութան հեղափոխական մարտիկների, ընդդեմ բոլոր նրանց, ովքեր հետևելով Սորհրդային մեծ Միության որինակին, մարտնչում են իմպերիալիզմի դեմ, հանուն սոցիալիզմի, ընդդեմ բոլոր նրանց, ովքեր պաշտպանում են խաղաղության ստալինյան հանձարեղ քաղաքականությունը, ընդդեմ բոլոր նրանց, ով պայքարում է, վորպեսզի այդ պատերազմը չվերածվի համաշխարհային սպանդի, իմպերիալիզմի խաչակրաց արշավանքի բոլոր աշխատավորների սոցիալիստական հայրենիքի դեմ:

Մեզ հասնում են հարյուր-հազարավոր մարդկանց ողնության կանչերը, մարդկի, վորոնք բանտի վանդակի և համակենտրոնացման ճամբարների լարափակոցների մեջ են նետված այն բանի համար, վոր նրանք դիտակցաբար ու յեռանդաղին հակադրժեղ են նոր սպանդի հարձակմանը:

Նրանց ձայները խլացնում են պատերազմական կարծեցյալ հաջողությունների շուրջն ստեղծված կեղծ ու դատարկ աղմուկը, շովինիստական հալածանքը: Նրանց կոչն ավելի ուժգին ար-



1958
40

В. ПИК
МЕЖДУНАРОДНАЯ СОЛИДАРНОСТЬ
ПРОТИВ ВОЙНЫ, РЕАКЦИИ И ТЕРРОРА
Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

ձագանգ և գտնում՝, քան ղեմագողիական կեղծավոր ճառերը հայ-
րենական «պաշտպանողական» պատերազմի մասին, «ղեմոկրատի-
աիայի» ու «ազատութեան» մասին, վոր հնչում են բուրժուական
պառլամենտների ամբիոններից ու տարածվում համաշխարհա-
յին յեթերում: Այդ կոչը թափանցում է շովինիզմի, գերշահույ-
թի համար կատաղի վազքի, ռազմական աժիոտաժի, սպեկուլյա-
ցիայի միասնա մթնոլորտը: Սպիտակ տեռորի զոհերի ճիչերը
մեղ հիչեցնում են մեր պարտքը, միջազգային ակտիվ համերաշ-
խութեան պարտքը:

Միջազգային համերաշխութունը—միջազգային կարմիր ու-
նութեան գործը—նեղրկալուծում ավելի քան յերբեք հանդիսանում
է պատմական բարձրագույն անհրաժեշտութուն: Խորհրդային
Միութեան ՄՈՊՐ-ի խնդիրները վիթխարիորեն աճել են, և ան-
վերջանալիորեն բազմազան են նրանց իրականացման հնարավոր-
ութեանները: Տանապատկիված ուժերով հակազդել պատերազ-
մին, ռեակցիային ու տեռորին՝ այս է ժամանակի հրամայա-
կանը:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՏԵՌՈՐԸ

«Արեմուտքում անփոփոխ է»—ամեն որ հաղորդում են պա-
տերազմող իմպերիալիստական տերութունների ռազմական տե-
ղեկագրերը: «Հանուն ղեմոկրատիայի մղվող» այս պատերազ-
մում ռազմական խոչոր գործողութուններ ղեռ չեն սկսվել:
Բայց վաղուց է արդեն սկսվել կատաղի արշավանքն ընդդեմ ղե-
մոկրատիայի ու ազատութեան, ընդդեմ աշխատավորների, վո-
րոնք ատում են իմպերիալիստական պատերազմը և հավանու-
թուն տալիս Խորհրդային Միութեան խաղաղարար քաղաքակա-
նութեանը:

Յոթ հազար կոմունիստներ ու պատերազմի հակառակորդներ
բանտ են նստեցված: Յերկու հարյուր հազար իսպանացի գաղ-
թականներ—տղամարդիկ, կանայք և յերեխաներ—նետված են
համակենտրոնացման ճամբարները: Ինտերնացիոնալ բրիգադներ-
ի վեց հազար մարտիկներ, այս թվում նաև վեց հարյուր հաշ-
մանդամներ, ծանր հարկադրական աշխատանքներ են կատարում
սպիտակ-գվարդիական, ֆրանսական ու լեհական սպաների
մտրակի տակ: Յերեսուն հազար քաղաքական գաղթականներ
Գերմանիայից, Ավստրիայից, Չեխո-Սլովակիայից, Լեհաստա-
նից, Ռումինիայից, Հարավսլավիայից և ուրիշ յերկրներից ներ-

կալված են Ֆրանսիայի կամ Ֆրանսական հասարակածային Աֆ-
րիկայի պատմական ճամբարներում: Այս է ղեռ բնավ վոչ լրիվ
հաշվեկշիռը յեռամսյա այն պատերազմի, վոր վարում է Ֆրան-
սական ռեակցիան, Ֆրանսական իմպերիալիզմն ընդդեմ ղեմո-
կրատիայի:

Վաթսուն հազար «ոտարեկրացի» յե ձերբակալված Ան-
դլիայում. մասսայական ձերբակալութուններ Հնդկաստանում,
Կանադայում, Հարավային Աֆրիկայում ու Ավստրալիայում.
քաղաքական եմիգրանտների վորում Բելգիայում, Շվեդիայում,
Շվեյցարիայում և Հոլանդիայում. արհեստականորեն ջարդի մըթ-
նոլորտ և ստեղծված կոմունիստներ—իմպերիալիզմի ու հա-
մաշխարհային սպանդի դիտակից հակառակորդներ—ղեմ ԱՄ
Նահանգներում, Հարավային Ամերիկայում, Սկանդինավիայում
և այլ չեղոք յերկրներում:

Այս ամենը վկայում է ամենասև ռեակցիայի, անաքող տե-
ռորի կատաղի սանձարձակութունը:

Պատճառները պարզ են. իմպերիալիստական պատերազմը կա-
րելի կլինի վարել միայն այն ղեպքում, յերբ մասսաները հավա-
տան անզլո-ֆրանսական ռազմական բլոկի կեղծ լողունգներին:
Վոչ մի բան այնպես չի սարսափեցնում պատերազմի իմպերիա-
լիստական հրձիգներին, ինչպես իմպերիալիստական պատերազմ-
ների նախապատրաստման ու վարելու գաղտնիքի մեղրկացումը,
ինչպես ճշմարտութեան հրապարակումը: Վորպեսզի մահը հա-
րուստ հունձ տանի, վորպեսզի արյամբ պարարտացված կուլի
դաշտերում փարթամորեն աճի գերշահութի, հարկավոր է սպա-
նել ճշմարտութունը, հարկավոր է փակել ճշմարտութեան մու-
նետիկների բերանը:

Իմպերիալիստական գիշատիչները, ջանալով սպանել ճշմար-
տութունը, ռադիոյով ու մամուլում, պառլամենտական, յեկե-
ղեցական ու համալսարանական ամբիոններից ազդարարում են,
թե բանը վերաբերում է ղեմոկրատիային, փոքր ազգերի ազա-
տութեանն ու անկախութեանը: Նրանք ջանում են փակել կոմու-
նիստների բերանը, վորոնք չեն դադարում պարզաբանել մասսա-
ներին ճշմարտութունը, վոր բանը վերաբերում է համաշխար-
հային տիրապետութեան, աշխարհի նոր վերաբաժանման, գա-
ղութներին, հումքին ու շուկաներին: Նրանք ուզում են փակել
բոլոր նրանց բերանը, ում համար պարզ են Խորհրդային Միու-
թեան արտաքին քաղաքականութեան իմաստն ու նպատակը:

Պատերազմող և չեզոք յերկրների աշխատավորական մասսաների համար պատերազմը բերում է կարելի ու տառապանքների սաստկացում, աճած շահագործում ու կեղեքում: «Այդպիսի պատերազմը բանվոր դասակարգին վնասն է չի խոտանում, բացի արյունոտ զոհերից ու աղետներից»¹: Ֆինանսական կապիտալին, թիզանոթի գործարանատերերին ու պարենի խոշոր առևտրականներին պատերազմը բերում է բարձր շահույթ և ղեկիղենդներ:

Ներկա պատերազմում վիթխարի չափերով աճել են միլիոնանոց բանակների պահպանման ու սպառազինման անարտադրական ծախսերը: Անգլիական ֆինանսների մինիստր Սայմոնը ստորին պալատում արդասանած իր ճառում բացահայտորեն ասել է. «Պատերազմն Անգլիայի համար արժե որակյալ 6 միլիոն ֆունտ ստերլինգ... Ժամանակակից ինքնաթիռը յերեքից—յոթ անգամ ավելի արժե, քան 1918 թ., ղեկիղիա զիննն ու ղերքերում պահելը յերկու անգամ ավելի արժե, քան վերջին պատերազմի ժամանակ. ուղմանավի արժեքը յերկու—յերեք անգամ ավելի յե, քան վերջին պատերազմում»: Փարիզի մի լրագրում հրատարակվել են տեղեկություններ, վորոնց համաձայն 1913 թ. բանակն ու նավատորմը կլանում էին պետական ծախսերի 12,5%: Այժմ նրանք կլանում են 45—55%: Համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմի ժամանակ յուրաքանչյուր սպանվածի ընկնում էր 70 կելոգրամ կրակված ուղմամթերք (155 Imperial Standart Pound), մի մարդու սպանութունը իմպերիալիստական առաջին պատերազմում արժեք 40 հազար դոլլար, իսկ այժմ, «Ֆորչյուն Մեգեղին» ժուռնալի կալիուլացիայի համաձայն, մի մարդու սպանության «ծախքերը» հասել են մինչև 100 հազար դոլլարի:

Ո՞վ է հատուցում մասսայական սպանդի, ամբողջ մարդերի ու յերկրների ամայացման այս ծախքերը: Այդ ստիպված են անելու փողովրդական մասսաները, աշխատավորները: Նրանք վոչ միայն իրենց կյանքն են զոհում, այլև վճարում են այն դուժարները, վորոնք ծախսվում են իրենց իսկ սեփական վոչնչացման վրա: Իսկ ֆինանսական կապիտալի մազնասների մի փոքրիկ կույտ հավաքում է վիթխարի գերշահույթներ, պատերազմական հրեշավոր ուղուտներ:

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմում կովի

¹ Մոլոտով, Խորհրդային Միության արտաքին քաղաքականության մասին, էջ 11:

դաշտերում ընկան 10 միլիոն աշխատավորներ: 28 միլիոն բանվորներ ու դյուղացիներ ընկան սովից ու համաճարակներից: Իայց սրա փոխարեն Հյուսիսամերիկյան պողպատի տրեստը ստացավ 895·606 հազար դոլլար դուռ շահույթ, «Ստանդարտ Ոյլի» խումբը՝ 407·789 հազար, իսկ Դյուսպոն կոնցերնը ակցիոներների միջև բաժանեց 139 միլիոն դոլլարի ղեկիղենդ:

Այս պատերազմում աճեցին ուղմական ծախքերը, բայց համապատասխանորեն աճեցին նաև ուղմական արդյունաբերության շահույթները: Միայն մի ամսում (1939 թ. սեպտեմբեր), զենքի արտահանման եմբարգոն վերացնելուց շատ առաջ, ԱՄՆ-ի ուղմական արդյունաբերության ակցիաների արժեքը աճեց 6 միլիարդ դոլլարով: «Հյուսիսամերիկյան ավիացիան» («Ջեներալ Մոտորսի» դուստր ընկերութունը) 1939 թ. 9 ամիսների ընթացքում ուղմական պատվերներից ստացավ 5·050 հազար դոլլար դուռ շահույթ: Նույն ժամանակամիջոցում «Ամերիկեն Յունայտեդ Եյքրաֆթ Կորպորեյշնը» ստացավ 5·800 հազար դոլլար դուռ յեկամուտ: Գլխական մթերքների ու ուղմապաշարի տրեստը 1939 թ. բաշխեց 77 միլիոն դոլլար շահույթ. նրա ակցիաները պատերազմի հետևանքով 126-ից հասան 188 դոլլարի:

Անգլիայի կոմունիստական կուսակցության կենտրոնական որդան «Իեյլի Ուորկերը» վերջերս հաղորդեց իր ընթերցողներին, վոր Գեմբրիջում արխատիրատական մի փոքրիկ ռեստորանում հավաքված էր գործարարների մի «ընտիր» խմբակ, վորպեսզի բաժանեն չիկոցի, բացվող շամպայնի խցանների տրաքոցի տակ տոնի յերկրի «սնտեսական վերելքը»: Այս հավաքույթում «Աուտին» մոտորների արտադրության կոմպանիայի ներկայացուցիչը հրճվանքից ցնծալով հաղորդեց, վոր յերկու ամսվա պատերազմի ընթացքում ընկերության յեկամուտը աճել է ավելի քան 5 անգամ: 1939 թ. դեկտեմբերի 1-ին «Մանչեստրր Գարդիանի» առևտրական բաժնում հաղորդվում էր, վոր մոտորի մասեր պատրաստող անգլիական խոշորագույն «Միթ և վորդե» ձեռնարկութունն այս տարի ավել է 21% ղեկիղենդ սովորական ակցիաներով և 50% — արտոնյալ ակցիաներով: «Եյրպորտս» Ֆիրմի շահույթն այս տարի կրկնապատկվել է: Անցած տարի նա չկարողացավ ղեկիղենդներ վճարել իր անդամներին, այս տարի նրա ղեկիղենդները կազմում են 6%: «Գլուի Մոտորս» Ֆիրման այս տարի վճարում է 15% ղեկիղենդ: «Հենրի Միդուս» Ֆիրմայի շահույթը 35%-ից հասավ 42-ի, նրա ղեկիղենդները հասան

25%-ի: «Ուսյտ և Կոմսո» և «Վիկինգ Ուեյնգ» ֆիրմաները վճարում են 20% դիվիդենդ 1938 թ. 5 և 10%-ների փոխարեն: Բիրմինհամում «Բուլտոն Պոլ Եյրբրաֆա» ակցիոններական ընկերությունը վարչական խորհրդի նիստում հաղորդվեց, վոր կապիտալն այս տարի կրկնապատկվել է, ակցիաների արժեքը համարյա յեռապատկվել է, առևտրական շահույթն աճել է 150%-ով: Ընկերությունն նախագահը հայտարարել է. «Պատերազմական ժամանակվա պատճառով աճել է մեր կոմպանիայի շինվածքների պահանջարկը: Մենք ամեն հիմք ունենք իրադարձությունների ընթացքի համար ուրախանալու»:

Ռազմանյութ արտադրող Փարբիկանտները զոհ են իրադարձությունների ընթացքից: Նրանց չեն շոշափում մահացածների ընտանիքների վիշտը, հոգսերը, տառապանքը: Չնայած պատերազմական գործողությունները թույլ են ընթանում արևմուտքում, արդեն պատերազմի առաջին յերեք ամիսների ընթացքում 2-100 անգլիական զինվոր ու սպա, 2 հազար նավաստի ու 400 ուղաչու (ըստ պաշտոնական տվյալների) ընկել են «հերոսի մահով» հանուն անգլիական ֆինանսական կապիտալի:

«Ծախքերը» աշխատավորներն են վճարում: Լոնդոնի Սիտիի որդան «Ֆինենչել Նյուսը» բացորոշ հայտարարում է. «Քաղաքացիական ընակչության սպառման կրճատումը, այսինքն՝ կենսական մակարդակի անկումը անխուսափելի յե: Ազգը հատուցում է պատերազմի համար—խոսքիս տառացի իմաստով նա հարկ է զգում ավելի պիբի ձգելու իր գոտին: Սա նրա համար հատուցման միակ միջոցն է»: Անգլիական ֆինանսների միևնիստը Մայմոնը ստորին պալատում ունեցած իր յելույթի մեջ ասաց, վոր վերջերս մտցված պատերազմական հարկերը «Անգլիայում յերբեքից գոյություն ունեցած ամենաբարձր հարկումն են... բայց նույնիսկ բարձրացրած հարկերը միայն կիսով չափ կծածկեն այս տարվա ծախսերը, այնպես վոր կարիք կլինի փոխառություններ բաց թողնել... Հասկանալի յե,—ասաց սրբ Մայմոնը,—փոխառությունները նշանակում են, վոր մեր սերունդները նույնպես ստիպված կլինեն իրենց վրա կրելու բեռի մի մասը»:

Այս հեռանկարը չի ներչնչում արդյոք սրբ Մայմոնին այն միտքը, վոր անհրաժեշտ է հարկ նշանակել կապիտալի կամ գույքի վրա: Բնա՛վ վոչ: Նա, ընդհակառակը, Անգլիայի բանվոր դասակարգին յերզվեցնում է աշխատավարձի բարձրացում չպահանջել, իսկ նրա խոսքերով, պետական ձեռնարկություններ

րի ծառայողների դրույթները բարձրացնելու մասին խոսք անգամ չի կարող լինել:

Մինչև պատերազմը անգլիական ընակչության յերկու յերրորդը շաբաթական վաստակում էր 3 ֆունտ ստերլինգից պակաս: Մինչդեռ 90 հազար կապիտալիստներ՝ Անգլիայի ընակչության 0,2%-ը, վորոնք ունեն 6,5 միլիարդ ֆունտ ստերլինգ կապիտալ, տարեկան ստանում են 800 միլիոն ֆունտ ստերլինգ անձնական յեկամուտ: Պատերազմը մեծացնում է այս դիսպրոպորցիան: Պատերազմական հարկեր, անուղղակի հարկերի աճում, հարածուռ թանգուլթյուն—այս ամենը ուժեղացնում են աշխատավորության պառակտելիացիան: Պատերազմի առաջին յերեք ամիսների ընթացքում պատերազմող և չեզոք յերկրներում պարենամթերքի գները բարձրացան 20—70%-ով:

Պատերազմն ավելացրեց աշխատավորության կարիքները: Աշխատանքի միևնիստը Բրոունի խոսքերով գործազուրկների թիվը Անգլիայում ավելացավ 200 հազարով: 1936 թ. հոկտեմբերի 16-ին Անգլիայում կար 1.499.893 գործազուրկ: 17 տարեկան չզարձած գործազուրկների թիվը 78 հազարից (1939 թ. ոգոստոս) հասավ 188 հազարի (1939 թ. նոյեմբեր): Ֆրանսիայում գործազուրկների թիվը ավելացավ 20%-ից ավելի և 1939 թ. դեկտեմբերին կազմում էր 325 հազար: Չնայած պատերազմական կոնյունկտուրային, գործազուրկների թիվն ԱՄՆ-ում հասավ ուկորդային թվի՝ 10 միլիոնի: Սրա հետ միասին արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1939 թ. աճեց 25%-ով:

Չնայած սոցիալ-դեմոկրատիայի ունեցիտոն զեկավարները քաղաքացիական հաշտություն կնքեցին բուրժուազիայի հետ, բանվորներն ավելի ու ավելի համառոտ են պահանջում բարձրացնել դրույթները, կարգավորել գործազուրկության, ավելի սպահով գոյություն հարցը: Գործազուրկների ու ցուլցների ալիքը պատերազմող յերկրներում վկայում է բանվորական մասսաների աճող դժգոհության մասին:

1939 թ. ոգոստոսին Անգլիայում յեղել է 106 գործազուրկ: Դրանք ընդգրկել են 37 հազար բանվոր: Հոկտեմբերին բավական մեծացավ գործազուրկների քանակը: 1939 թ. նոյեմբերին մոտ 9 միլիոն անգլիացի բանվոր պահանջ առաջադրեցին բարձրացնելու աշխատավարձը: Կառուցողները, մետաղագործները, հորատողները, յերկաթուղայինները այնուամ էլին դադարեցնել քաղաքացիական խաղաղությունն արդյունաբերությունից մեջ: 500 հազարից ավելի յերկաթուղայիններ պահանջում էլին աշխատավարձը բարձրացնել շաբաթական 10 շիլինգ:

Պատերազմը զգալի չափով վատթարացրեց Ֆրանսիայի աշխատավորների դրուժյունը. այս բանն ստիպված եր խոստովանելու «Մանչեստրը Գարդիանի» Փարիզի թղթակիցը: Նա հարդրում է, վոր Ֆրանսական բանվորները շարժական 60 ժամ աշխատում են մի աշխատավարձի համար, վորը համապատասխանում է 52-ժամյա շարժվա: 1940 թվի հունվարի 1-ից հետո նրանք 60 ժամ աշխատում են մի աշխատավարձի համար, վորը համապատասխանում է 45-ժամյա շարժվա: Բացի սրանից, աշխատավորներն ստիպված են իրենց աշխատավարձի 15%-ը տալ իրրև պատերազմական հարկ:

«Վորովհետև սոցիալ-դեմոկրատական ղեկավարները հայտնություն տվին գործադուլների արգելման, Ֆրանսական բանվորների դժգոհությունն առայժմ գլխավորապես արտահայտվում է «պասսիվ դեմադրություն» ձևով (տես «Մանչեստրը Գարդիան» 1939 թ. գեկտեմբերի 21):

Այնուամենայնիվ դանիական մամուլի տեղեկություններից մենք իմանում ենք, վոր պատերազմի առաջին իսկ շաբաթին Ռեյնոյի, Ֆարմանի, Միարոնի և Բլոսի ուղղման դործարաններում տեղի յեն ունեցել միջանի ժամ ակող գործադուլներ: Հարկ է զգացվել մարտական պատրաստության բերել Փարիզի կայսգորը, փամփուշտներ բաժանել զինվորներին:

Ռեակցիան և տեուրը՝ պատերազմի դեմ ազնվորեն մարտնչողներին բանտարկություն, դաշտային դատարաններ ու համակենտրոնացման ճամբարներ—ահալասիկ մասսաների դժգոհության աճման դեմ բուրժուազիայի գործադրած պայքարի մեթոդները:

Կապիտալիստները վախենում են պատերազմի «վաղաժամ» վերջանալուց: Անտիբրայենի կաթոլիկական «Լյա Մետրոպոլ» լրագրի տեղեկությունով մի շարք անգլիական արդյունաբերողներ ապահովադրվում են «խաղաղության վտանգից»: Ապահովադրական ընկերությունները կատաղորեն հարստանում են դարձյալ ի հաշիվ աշխատավորների՝ «խաղաղության վտանգից» ապահովադրելիս 100 ֆունտի համար պահանջելով ամսական 10 ֆունտ ստերլինգ պրեմիա: Նյու-Յորքի բորսայական շրջանների մամուլը գործի յե դրել այնպիսի խոսքեր, ինչպես են «խաղաղության վտանգ», «խաղաղության սպառնալիք», «խաղաղության լուրի վնասակար ազդեցություն»:

Իսյց հաշտություն կնքելու հետ կապված գործարար «վտանգներից» էլ ավելի կապիտալիստները վախենում են «սոցիա-

լական վտանգներից»: «Մանչեստրը Գարդիան» լիբերալ լրագիրը տրանջում է. «Պատերազմի վախճանը—դա սոցիալական դժգոհություն ժամանակաշրջանն է, յերբ գոյություն ունեցող հասարակարգը յենթարկվում է անակնկալ վործուժյան»: Այդ առանձնապես վտանգավոր է այնպիսի յերկրի համար, ինչպիսին Անգլիան է, վորտեղ, ինչպես հավաստում է լրագիրը, «մինչև պատերազմը կար 8 միլիոն մարդ, վորոնք այնքան չենին վատակում, վորպեսզի հնարավորություն ունենան գնելու պարենի այն միլիոնումը, վոր անգլիական բժիշկների միավորությունը սահմանել է իրրև անհրաժեշտ քանակ առողջությունը պահպանելու համար,—մի յերկրում, վորտեղ յերիսաների մի քաուրդ մասը թերանովում է»:

Անգլիական և Ֆրանսական իմպերիալիստներն ուզում են «սոցիալական դժգոհությունը» հաղթահարել նոր վերայի Գերմանիան մասնատելու և կեղեքելու ոգնությունը: Անգլիական և Ֆրանսական կառավարությունները համառորեն հրաժարվում են պատերազմի իսկական նպատակները վորոշելուց: Սակայն այն ճառերում, վոր ասել են անգլիական արտաքին գործերի մինիստրը Հայլիֆաքսը, անգլիական ստորին սրալատում նորին մեծություն ռադիոգլիայի ղեկավար Ետտլին, նախկին զինվորական միլիտար Կուպեր Դաֆը (Ամերիկա կատարած նրա պրոպագանդիստական ճամբորդության ժամանակ), Դալադեյնի ճառերում, Ֆրանսական իմպերիալիզմի այնպիսի ներկայացուցիչների հոգվածներում, ինչպես են Պերտինաքսը կամ Կերիլիսը և անգլո-ֆրանսական իմպերիալիզմի մի շարք այլ բովված քաղաքագետներ, ավելի ու ավելի յեն յերևան դալիս պատերազմի իսկական նպատակները: Անգլիական և Ֆրանսական ռազմական քաղաքագետների դեմագոգիան ու Ֆրազեուրդիան չի կարող թազցնել պատերազմի իսկական իմաստը, վոր է՝ Անգլիայի և Ֆրանսիայի գերիշխանություն յտակ ստեղծել յեվրոպական «պետությունների միություն», ամրացնել ու ընդարձակել անգլոֆրանսական բոլիվ գերիշխանությունը դադուլներում, ստեղծել յուրատեսակ «սըրբազան միություն», վորը պետք է հրով ու սրով արմատախիլ անի հեղափոխական բանվորական շարժումը: Այս նպատակի իրականացման համար նրանք դիմում են ռազմական տեուրի:

Լենինը մեզ ուսուցանում է. պատերազմի բնույթը, նրա իսկական նշանակությունը «վորոշվում է նրանով, թե վար քաղաքականությունն է շարունակում պատերազմը («պատերազմը

քաղաքականութեան շարունակումն է»), վոր դասակարգը ինչ նպատակներով և պատերազմ վարում»¹:

Պատերազմի հրճիչներն են Անգլիան և Ֆրանսիան: Պատերազմի նպատակների մասին մենք խոսեցինք վերև: Պակաս պարզ չէ, թե ինչ քաղաքականութիւն պիտի շարունակի պատերազմը: Պատերազմը պետք է շարունակի թույլ ազգերի ու գաղութային ժողովուրդների ամենադժամ կեղեքման ու շահագործման քաղաքականութիւնը. պատերազմը պետք է շարունակի Վերսալյան աշխարհային, իմպերիալիստական խաղաղութեան քաղաքականութիւնը, սեփական յերկրի աշխատավորական մասսաների շահագործման, կողոպտման ու կեղեքման քաղաքականութիւնը, խոր թշնամանքի, մահացու ատելութեան քաղաքականութիւնը բոլոր աշխատավորների սոցիալիստական հայրենիք՝ Սորհրդային Միութեան հանդեպ:

Յերկրից դուրս այս քաղաքականութիւնը շարունակվում է արդի պատերազմի մահաբեր միջոցներով, իսկ յերկրի ներսում՝ բացահայտ, անողոր սպիտակ տեղորի միջոցներով:

Պատերազմը, այսինքն՝ քաղաքականութեան շարունակումն ուրիշ միջոցներով, ամենից առաջ հանդավ այն տարրերութեան անհետացման, վոր կար Ֆինանսական կապիտալի դիկտատուրայի բացահայտ ռեակցիոն ձևերի և այդ դիկտատուրայի քաղաքական ձևերի՝ բուրժուական դեմոկրատիայի միջև:

Վաճառված լրագրերը, վորոնց պահպանում են 200 ընտանիք Ֆրանսիայում, 917 գաղութային ստրկատերեր Անգլիայում, Սորգանները, Դյուպոններն ու Ռոկֆելլերներն Ամերիկայում, ջանում են համոզել ժողովրդական մասսաներին, վոր այս պատերազմը խաչակրաց արշավանք է հանուն ազատութեան ու դեմոկրատիայի, հանուն մանր պետութիւնների ինքնորոշման ու անկախութեան իրավունքի: Բայց ժողովրդական մասսաները փաստերի հիման վրա այլևի ու այլևի չեն համոզվում, վոր հենց անգլիական ու ֆրանսական բուրժուազիան է հանդիսանում ամենամոռայ ռեակցիայի, ամենավայրենի սպիտակ տեղորի, իմպերիալիստական ամենատուր նկրտումների գրոշակիրը:

ՓԱՍՏԵՐ, ՄԻԱՅՆ ՓԱՍՏԵՐ

Մտորին պարատում արտասանած իր վերջին ճառերից մեկում անգլիական արտաքին դործերի մինիստր լորդ Հալիֆորքը հայտարարեց.

¹ Լենին, Սոցալիստիկ կոմունիզմի և ինչպես կովել նրա դեմ, Յերկր. Տ. XXI, էջ 190:

«Նոր աշխարհը, վոր մենք ջանում ենք ստեղծել, կկառուցվի բոլոր ժողովուրդների համագործակցութեան վրա, ամբողջ ժողովրդի հավասարութեան, ինքնահարգման և փոխադարձ հանդուրժողութեան հիման վրա»:

Հարդելի լորդի ասածները կրկնում է Չեստերի յեպիսկոպոս դոկտոր Կրիկը, վորն այս որերս ազդարարեց.

«Պատերազմի մեր նպատակը միանգամայն պարզ է. հարկու վոր է հաղթանակ նվաճել ի փոստ տիրոջ և հանուն յերկրի վրա ասածու թագաւորութեան ստեղծման»:

Նույն խոնկին են ծխում նաև ֆրանսական սոցիալ-դեմոկրատիայի քուրմեր Ժուան և Բլյումը: Նրանցից մեկն աշխատավորներին խոստանում է պատերազմից հետո «նոր սոցիալական ռեֆորմ», իսկ յերկրորդը՝ միանգամից «ավարտուն սոցիալիզմ»: Շատ այլևի համեստ է ռադիկալ դեպուտատ դե-Մոնդին, վորն ազդարարում է պատերազմից հետո «նոր հումանիզմի» ստեղծում:

Իսկ զգաստ ատորյայի լույսի տակ «նոր աշխարհը» յերևում է իբրև նոր համակենտրոնացման ճամբար, «աստու թագաւորութիւնը»—բանտի ու տաժանքի թագաւորութիւն, «ավարտուն սոցիալիզմը»—աշխատավորութեան բոլոր իրավունքների վոնջացում, իսկ «նոր հումանիզմը»—քաղաքական բանտարկյալների հավասարում քրեական վոճրագործների հետ, քաղաքագիրների աքսորում հասարակածային Աֆրիկա ճանապարհներ կառուցելու, իսպանական դժոխքից փախած կանանց ու յերեխաների սովամահութեան դատապարտում, խաղաղ դյուղերի ուժբաղկոծում Հեղկաստանի հյուսիս-արեւմուտքում:

Այս «նոր աշխարհի» ցայտուն սխեմին է հանդիսանում գերմանացի հայտնի գրող և ազատութեան մարտիկ Յրիդրիխ Վոլֆի վիճակը: Պատերազմի սկսվելուց մի քանի ժամ առաջ՝ 1939 թ. սեպտեմբերի լույս 1-ի գրքերը, մորի գվարդիան ներս խուժեց Փարիզի նրա բնակարանը և նրան քարջ տվեց լե Վերնեյի (Արիժ) համակենտրոնացման ճամբարը: Այստեղ «Յիանկալի», «Կատարբոյի նախատիները», «Ճլորիստոլֆ», «Պրոֆեսոր Մամբոլ» դրամաների 50-ամյա հեղինակը ծանր հիվանդ վիճակում սենեկալցիների ու լեհական սպաների մտրակների տակ քար պիտի կրի ճանապարհներ շինելու համար: Յրիդրիխ Վոլֆին բանտային կեղտոտ զգեստ են հագցրել և ուղարկում են ամենանախատացուցիչ աշխատանքի, մինչդեռ Անգլիայի ու Ֆրանսիայի կենթատրոններում ցուցադրում են նրա «Պրոֆեսոր Մամբոլ» ֆիլմը (վո-

բից ցենզուրան դուրս ե հանել հեղափոխական ամբողջ բովանդակութիւնը), վորպեսզի խմբերիալիստական նպատակներով ոգտազործի բնակչութեան հակաֆաշիստական զղացմունքները:

Ֆրեզրիս Վոլֆի բախտին են արժանացել զերմանացի հայտնի գրողներ, ինչպէս որինակ՝ Լեոնարդ Ֆրանկը, Գուստավ Ռեզլերը և Բարդեր Ուրենը, Ֆրանսացի գրող Լուի Արագոնը: Նրա բախտին են արժանացել ազատութեան ու դեմոկրատիայի բոլոր իսկական մարտիկները:

«Նոր աշխարհի» սիմվոլ հանդիսացալ Ֆրանսական պալատի 1939 թ. նոյեմբերի 30-ի նիստը: Արտաքին քաղաքականութեան հարցերի վերաբերյալ Դալադիեյի ճառի ժամանակ դահլիճում յերևաց Ֆրանսական վոստիկանութեան հետապնդումներից խուսափած կոմունիստ ղեկուստատ Ֆլորիան Բոնտեն: Պատլամենտի նիստում նա հանդես յեկալ ճառ արտասանելով պատերազմի դեմ, նրա ձեռքումն եր կոմունիստական կուսակցութեան ղեկաւարացիան ընդդեմ պատերազմի և պատերազմական կառավարութեան: Լսելով իրենց մեղադրողին, բուրժուական և սոցիալ-դեմոկրատական ղեկուստատները միջանի վայրկյան շիտթվեցին, իսկ այնուհետև վայրենի վոտնոց բարձրացրին: Պալատի նախազահ Երրիտն, նրա հետ միասին նաև Լեոն Բլյումն ու իր համախոհները զազազած սկսեցին բացականչել. «Կորչե՛ն կոմունիստները»: Սպասաւորներն ու ղեկուստատները հարձակվեցին Բոնտեյի վրա, սկսեցին ծեծել նրան և դուրս շարտեցին դահլիճից: Պատլամենտի շենքի մոտ Բոնտեն ձերբակալվեց: «Դեմոկրատիայի» հիւրավի նշանավոր հաղթանակ:

Յերբորդ հանրապետութեան մեջ պետական մեծագույն հանցագործութիւնն և պատերազմն անվանել խմբերիալիստական պատերազմ, հայանութիւն տալ Խորհրդային Միութեան խաղաղարար քաղաքականութեանը և պաշտպանել աշխատավորութեան շահերը: Պատերազմը հայտարարվելուց հինգ ուր առաջ արգելվեց կոմունիստական կուսակցութեան, ՄՈՊՐ-ի, կոմյերիտմիութեան, գերմանական, իտալական և իսպանական քաղտարագիրների ամբողջ մասնուլը, լրագրերի խմբագրութիւնները տակնուվրա արվեցին, իսկ խմբագիրները բանտարկվեցին:

Պատերազմ հայտարարվելուց հետո յերկրի բոլոր պրոպրետարիալ կազմակերպութիւնները կոմունիստական կուսակցութեան գլխավորութեամբ հայտարարվեցին որենքից դուրս, նրանց ղեկաւարներն ու ակտիվիստները ձերբակալվեցին, նրանց գույքը, այս թիւում նաև իսպանական կոմիտեները ու ՄՈՊՐ-ի

Փոնդերը, բռնազրաւվեցին: Հինգ միլիոն Ֆրանկ, 14 հազար պարենով լի փաթեթ, վոր հատկացված եյին իսպանական դադթականներին, բռնազրաւվեցին:

Քաղաքացիական խաղաղութեան քաղաքականութեանը՝ ժուռյի ու նրա համախոհների քաղաքականութեանը հայանութիւն տալուց հրաժարվող հարյուրավոր պրոֆիլագմակերպութիւններ ցրվեցին, նրանց գույքը բռնազրաւվեց, շենքերը տակնուվրա արվեցին, նրանց ղեկաւարներն ու պաշտոնատար անձերը ձերբակալվեցին: Մինչև 1939 թ. ղեկտեմբերի վերջը ցրվեցին 242 բանվորական՝ մեծ մասամբ պրոֆմիտթենական կազմակերպութիւն:

Գրչի մի շարժումով վերացվեց պառլամենտի՝ միլիոնավոր ձայներով ընտրված կոմունիստ ղեկուստատները անձեռնմխելիութիւնը այն հիման վրա, վոր նրանք պալատի նախազահ Երրիտին գրած նամակում պահանջում եյին հարաւորութեան չափ շուտ արդարացի ու կայուն հաշտութիւն կնքել, համազորձակել Խորհրդային Միութեան հետ: Յճ ղեկուստատներ, վորոնց վոստիկանութեանը հաջողվել է գտնել, այժմ տատապում են բանտերում:

ՅԱԴ-ից ավելի մունիցիպալիտեաներ, վորոնց գլուխ կանգնած էյին կոմունիստները, ցրված են, կոմունիստական մունիցիպալ խորհրդականների մեծ մասը ձերբակալված է:

Փարիզի կոմունեայի ժամանակներից ի վեր Ֆրանսիայում չտեսնված տեռորի ալիքը տարածվեց ամբողջ յերկրում: Կոմունիստների դեմ տեռորիստական արշալանքի գլխավոր նախաձեռնողներից մեկը՝ գաղտնի խորհրդական Լեոն Բլյումը 1939 թ. սեպտեմբերի 9-ին «Պոպուլերում» գրում եր. «Յեթե վորեւ մեկը հայտնի յե իր գյուղում իրբև կոմունիստ, այդ բավական է, վորպեսզի նա ձերբակալի»: Սոցիալ-դեմոկրատիայի ղեկացիոն ղեկաւարների, տրոցկիստների ու կազուլյարների հետ սերտորեն միացած վոստիկանական շները կազմակերպում են ակտիվ կոմունիստների, պատերազմի բոլոր հակառակորդների ու խաղաղութեան բարեկամների շուրջկալներ: Այսպիսով յերեք ամսում «մեկուսացվեցին» պատերազմի յոթ հազար հակառակորդներ:

Բոլոր նրանց դեմ, ովքեր Ֆրանսական խմբերիալիզմի դեմ պայքարում են բանավոր ու գրավոր պրոպագանդայի միջոցով, կոմունիստական թուղիկներ տարածելու միջոցով, դաժան դատաւճիռներ են հանվում: Քաղաքացիական ու ռազմական դա-

տարանները անընդհատ գործում են, հարյուրավոր բանվորներ պատերազմի դեմ արտահայտվելու համար դատապարտվում են մինչև 10 տարվա բանտարկութան և դրամական բարձր տուգանքներ:

Հիտուն տարեկան բանվոր Լուի Կոմբը, վոր պատերազմի հաշմանդամ է և յոթ յերեխայի հայր, Փարիզի ռազմական դատարանի կողմից դատապարտվեց այն բանի համար, վոր նա բողոքել է աշխատանքային որն առանց համապատասխան վարձատրութան յերկարացնելու դեմ: Այս բանվորը հեշտ պրծավ բանտարկությունից—նա նստեց միայն միքանի ամիս: Բայց արդեն նոյեմբերի վերջին Փարիզի դազային գործարանի 2 բանվոր դատապարտվեցին 6 և 9 տարվա բանտարկութան այնպիսի արտահայտությունների համար, «վորոնք խախտում են բանակի բարոյականութան հիմքերը»: Տեոորը հավասարապես ուղղված է նաև սոցիալիստական կուսակցութան անդամների դեմ: Այսպես, որինակ, սոցիալիստական կուսակցութան անդամներ Անդրե ժյուենը, ժորժ Մոպսեն և նրա կինը հակապատերազմական թուուցիկներ պահելու և տարածելու համար դատապարտվեցին 5 և 4 տարվա բանտարկութան:

Թե ինչ չափեր է ընդունում տեոորը Փրանսական բանակում, ցույց է տալիս Փրանսիայի մի զինվորի նամակը Բրյուսելի «Վուա դյու Պյոպլ» լրագրի խմբագրությանը, վորտեղ ի միջի այլոց ասված է. «Վորքան ինձ հայտնի յե, մեր վայրերում ռազմական դատարանը արդեն ավելի քան 50 մարդու դատապարտել է «հեղափոխական պարտվողականութան» համար»:

Փրանսական բանտերում շատ սիրալիր են վարվում խոշոր գողերի, ակցիաներ կեղծողների, սուտենյորների ու սեակցիոներների հետ: Նրանց տրամադրում են լավագույն կամերաներ, թույլատրում են կերակուր ստանալ ամենաթանգ սեստորաններից, տեսակցել ազգականների հետ—մի խոսքով՝ նրանց հետ վարվում են նրանց աստիճանի համեմատ: Մինչդեռ պատերազմն սկսվելուց հետո ձերբակալված կոմունիստ ղեպուտատների, մուսիցիկայալ խորհրդականների ու պրոֆիտութենական ակտիվիստների համար մերժում են հաստատել նույնիսկ քաղաքական բանտարկյալների բավականաչափ դաժան սովորական սեփիմը: Նրանց հետ վարվում են, ինչպես մարդասպանների, գողերի հետ. նրանց թույլ չեն տալիս ստանալ փոստ և պարենով փաթեթներ: Նրանք ստիպված են լինում ժամերով կանգնել ձեռքները վեր բարձրացրած, յերեսները դեպի պատն արած, մինչև վոր

իրենց հասնի հարցաքննվելու հերթը: Այս սեփիմը տարածվում է նաև այնպիսի քաղաքական բանտարկյալներին Վրա, ինչպես ղեպուտատ Ժան Դյուկլոն՝ պատերազմի ինվալիդ, վորը զրկվել է մի աչքի տեսողությունից և մյուսի տեսողության 90%—ից, ինչպես ղեպուտատ Ֆելիքս Բրունը, վորի յերկու վոտքերը կարված են պատերազմում ստացած վերքի պատճառով:

Փրանսական աշխատավորները, գերմանական, ավստրիական, լեհական, չեխական և իսպանական քաղաքագիրներն աքսորվում են Մազազասկար, Սատանայի կղզի և հասարակածային Աֆրիկա: Ինտերկոնտինենտյուս հեռագրական գործակալութան թղթակից Ա. Տրուամը գրում է.

«3 հազարից ավելի գերմանացիներ, 7 հազար Ֆրանսացիներ, միքանի հազար լեհեր, չեխեր, ավստրիացիներ, իսպանացիներ և այլն բանտ են նստեցված կամ համակենտրոնացման ճամբար: Նրանցից շատերն արդեն աքսորված են Ֆրանսական հասարակածային Աֆրիկա: Այնտեղ նրանց 50-ական հոգով շղթայում են յերկաթե ծանր շղթաներով և ստիպում ճանապարհներ շինել—մի աշխատանք, վորից մահանում են նույնիսկ տեղացիները»:

Փրանսական համակենտրոնացման ճամբարների դրության մասին ակնատես՝ ամերիկացի Ժուլիան Ուլլեյ Ջոնսոնը հայտնի է հետևյալ մանրամասնությունները.

«Կյանքի պայմանները շատ վատ են: Այստեղ անկողնի սպիտակեղեն չեն տալիս, իսկ սնունդը վատ է և աղքատիկ: Այստեղ արտաքնոցներ չկան և փաստորեն ըլացվելու հնարավորություն չկա: Կալանավորները բավականաչափ չեն մատակարարված հազուստով: Գրեպը, ղիզենտերիան և ուրիշ հիվանդություններ շատ արագ են տարածվում: Կալանավորներին հասցեագրված նամակները նրանց չեն տրվում»:

Հոլանդական «Սեա Ֆոլկադադրադ» լրագիրը 1939 թ. դեկտեմբերի 15-ի համարում հաղորդում է, վոր տասնյակ-հազարավոր ոտարերկրացի բանվորներ տեղավորվում են քրեական վոճրագործների հետ միասին: Համակենտրոնացման ճամբարներում իշխում են հիվանդությունները: Վիլլամալարի (Լուար-ե-Շերի ղեպարտամենտ) համակենտրոնացման ճամբարում ներկարվածների 75%-ն ստիպված են աշխատելու գյուղատնտեսական ծանր աշխատանքներում որական 11—12 ժամ, վորովհետև նրանք հրաժարվեցին մտնել ոտարերկրյա լեզիոնի մեջ: Նրանց ծեծում են վերահսկիչները, սնունդը շատ վատ է, նրանք քնում են չտաքացվող բարակներում, առանց վերմակների:



ԱՄՆ՝ իսպանական դաղթականներին ոգնող ընկերութեան գործկոմի քարտուղար Հերման Ռայսիգի տեղեկութեաններով, ներկայված իսպանական դաղթականներին մեջ կան 2·063 դարձուցական ուսուցիչ, 2·440 տպագրիչ, 2·809 մոնտյոր, 5·922 ատաղձագործ, 10·272 մեխանիկ, 45·918 գյուղատնտեսական բանվոր, հարյուրավոր ատամնարուժիներ, ճարտարագետներ ու ինժեներներ: Բացի սրանից՝ 40 հազար յերեխաներ մնացել են անօթեվան, դատապարտված են սովի ու համաճարակների: 20 հազար իսպանական դաղթականներ, Ռայսիգի կարծիքով, մշտապես գտնվում են Ֆրանսիայի դահիճներին հանձնվելու սպառնալիքի տակ: Շատ դաղթականներ ինքնասպանություն են գործում, հենց վոր լսում են Փրանսական իշխանություններից, վոր նրանք պետք է հանձնվեն:

Ռազմական տեղորդ թաղավորում է ամբողջ Ֆրանսիայում: Բայց սա ե՛լ ավելի դժգոհ է կրում Փրանսական դաղութներում: Թունիսում, Ալժիրում, Փրանսական Մարոկկոյում և Հնդկա-Չինում ձերբակալված են հարյուրավոր կոմունիստներ ու նացիոնալ-հեղափոխականներ, վորոնց վիճակը մեծապես անհանդատություն է հարուցում: Հնդկա-Չինում արդեւրված են նացիոնալ-հեղափոխական բոլոր լրագրերը: Սատանայի կղզում բանտարկված հնդկա-չինական 3 հազար ազատություն մարտիկներին համար ուժեղ բավական վատթարացել է պատերազմը հայտարարվելուց հետո:

Անգլիայում ռեակցիոն կառավարությունը «բախտանքով» նրանով, վոր ներկայում է տասնյակ-հազարավոր «ոտարեկրացիներին»—մեծ մասամբ քաղաքաբնակներին, արգելում է կոմունիստական ժողովները, ձերբակալում է պատերազմի դեմ հանդես եկող հոստոններին, բռնադրավում է հակապատերազմական դրականությունը և նոր որեւէներ պատրաստում՝ նպատակ ունենալով վերացնել բուրժուական դեմոկրատիայի մնացորդները: Անգլիական դոմինիոններում ու գաղութներում իշխում է ռազմական տեղորդ:

Անգլիական ցենզուրայով անցած, այսինքն բնավ վոչ լրիվ, տեղեկություններով, Կանադայում պատերազմական դրութեան վերաբերյալ որեւէի հիման վրա ամեն որ ձերբակալվում են թուղիկներ տարածող տասնյակ մարդիկ. վոստիկանությունը հարձակվում է բանվորական կազմակերպությունների շենքերի վրա, բանտ է նստեցնում լեզալ հրատարակվող հակապատերազմական լրագրեր վաճառողներին. Կանադայի կոմունիստական

կուսակցութեան կենտրոնական որդան «Կլերիոնը» արգելված է, և նրա պատասխանատու խմբագիրը դատի յե տրվում պատերազմական դրութեան վերաբերյալ որեւէի հիման վրա այն բանի համար, վոր նա տպագրել է Կոմինտերնի կողմ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխություն XXII տարեդարձի առթիվ:

Նոր Զելանդիայում որեւէ է հրատարակված գործադուլներն արգելելու մասին: Ամբողջ Ավստրալիայում իշխում է ռազմական ցենզուրան:

Անգլիական կայսրութեան մարդարիտ Հնդկաստանը մշտապես յեղել է ամենադժգոհ շահագործման ու կեղեքման որոյնտր: Բավական է հիշեցնել, վոր Հնդկաստանում ներկայումս 40 միլիոն գործազուրկ կա: Բնակչության 92%-ն անգրագետ է: Միայն 1930 թվից մինչև 1938 թ. գյուղացիություն պարտքը 9 միլիարդ ռուբլից հասել է 16 միլիարդի: Հնդկիկ կյանքի միջին տեղությունը 1881 թ. 30 տարի յեր, իսկ այժմ միայն 23 տարի յե: Հնդկաստանում նորածին յերեխաներին 45%-ը մահանում է:

Մյնքան դժանորեն շահագործվող այդ ժողովուրդին անգլիական իմպերիալիստները ջանում է յին պատերազմը հայտարարվելուց հետո հրապուրել նոր կեղծավոր խոստումներով և դրդել ակտիվ մասնակցություն ցույց տալու պատերազմին իր շահագործողների շահերի համար: Բայց այդ փորձն անհաջողություն էր կրեց:

«Յեթե անգլիական լեյբորիստական կուսակցությունն այնպես հոգ է տանում դեմոկրատիայի մասին,—ասված է անգլիական լեյբորիստական կուսակցության ուղղված հնդկական սոցիալիստների հեռագրում,—ասպ մենք հանձնարարում ենք նրան առաջին հերթին իր ուշադրությունը դարձնել Հնդկաստանի վրա: «Հնդկաստանի պաշտպանություն որեւէը» մտցնելուց հետո ամեն մի ազատություն վոչնչացված է յերկրում: Հնդկաստանի կառավարման վերաբերյալ որեւէն ընդունվել է լեյբորիստական կուսակցության աջակցությամբ, և այդ որեւէը վերացնում է պրովիցիայի ավտոնոմիան: Մենք հանձնարարում ենք լեյբորիստական կուսակցությունը պայքարել ռեակցիայի դեմ իր տանը»:

Անգլիական կառավարությունը հնդիկների պահանջին պատասխանեց տեղորդ ուժեղացումով: Տասնյակ ուժեղացումներ ուղարկվեցին հյուսիս-արևմտյան Հնդկաստան, վորպեսզի այդ մարդը «խաղաղեցնեն» Փուգասային, հրկիզող և դադային ուղարկելով:

Պատերազմի առաջին իսկ որից Հնդկաստանում ուժի մեջ մտավ յերկրի պաշտպանութեան դեկրետը: Այդ դեկրետի համաձայն մահապատիժ և տրվում նրան, ով «տպագրում է հողված կամ հաշվետվութուն, վորը—անկախ այն բանից, թե նա ճիշտ թե սխալ տեղեկություններ է պարունակում,—կարող է դժգոհութուն սերմանել կառավարութեան դեմ կամ դասակարգային ատելութուն»: Այս դեկրետի հիման վրա Փենջաբի նահանգում ձերբակալված են 2 հազար գյուղացի, վորոնք պահանջում էին իջեցնել հարկերը: Հոկտեմբերի վերջին Մայսորի իշխանութեան մեջ բանտ նստեցին 2 հազար գյուղացի, վորոնք գանգատվում էին անտառից ուղտվելու վերաբերյալ որենքի վատթարացման դեմ: Պատնայում (Բիդարի նահանգ) ձերբակալված են Ազգային կոնգրեսի չորս անդամ: Ջալանդարում (Փենջաբի նահանգ) ձերբակալված են գյուղացիական միութեան նախագահը պատերազմի դեմ արտասանած ճառի համար, հակապատերազմական շարժման յերեք ղեկավար, «Ճորուարդ» բլոկի նախագահն ու գլխավոր քարտուղարը, բլոկ, վորը ձգտում էր միավորել Հնդկաստանի բոլոր ձախ կազմակերպությունները: Հնդկաստանից ստացվող տեղեկությունները վկայում են, վոր ամբողջ յերկրում տեղի յեն ունենում մասսայական ձերբակալություններ:

Մրանք են փաստերը: Անգլիական իմպերիալիստները փորձում են չնկատել այս փաստերը: Նոյեմբերի վերջին անգլիական գաղութային գերատեսչութեան քարտուղարն ստորին պալատում լիտիութուն ունեցալ հայտարարելու. «Անգլիայի սահմաններից դուրս գտնվող քննադատներն ասում են, վոր մենք այս պատերազմը վարում ենք ի պաշտպանութուն իմպերիալիզմի, գործն այնպես պատկերելով, վոր իբր իմպերիալիզմը մի ինչ—վոր կուպիտ, դաժան, գաղանային բան է: Այս ասելով նրանք հասկանում են շահագործման և կեղեքման սիստեմ ընդարձակ մասշտաբով: Բայց անգլիական իմպերիալիզմը հեռու յե կեղեքման սիստեմ լինելուց»:

Այս ցինիկ պիեմանը կարատասխաններ Բերնարդ Շոուի խոսքերով, վորն իր «Ճակատագրի մարզը» կատակերգութեան մեջ գծում է անգլիական իմպերիալիստի պորտրեն.

«Նա, առանց քաշվելու, ընտրում է տվյալ մոմենտին իրեն հարկավոր և՛ֆեկտավոր բարոյական պատյանը: Իբրև ազատութեան ու ազգային անկախութեան մեծ մարտիկ նա նվաճում է աշխարհը, տիրապետում է նրան և այդ անվանում է «զաղութացում»... Իր կղզային տիրապետությունները պաշտպանու-

թեան համար նա շոգենայի վրա յե վերցնում նախային քահանային, խաշանիչ դրոշակն ամբացնում է գլխավոր կայսին և այսպես լողում աշխարհի շուրջը՝ այրելով, խորտակելով ու վոչընչացնելով այն ամենը, ինչ խանդարում է նրա տիրակալութեանը ծովի վրա... Նա պատերազմը վարում է հայրենասիրական սկզբունքներից յեղնելով, նա խարում է առևտրային սկզբունքներից յեղնելով և նա հարստահարում է ազատ ժողովուրդներին պետական—քաղաքական սկզբունքներից յեղնելով...»

Անգլիական և Ֆրանսական իմպերիալիստների դեմագոգիական խոստումներին շատ լավ է պատասխանել Հայկթիի հայտնի պոետ Ժակ Ռուսմենն իր պատմին ամերիկյան գրողների միութեան սարքած բանկետում Նյու-Յորքում: Նա ասել է.

«Մենք հրժարվում ենք հարել նրանց, ովքեր բանտ նստեցին մեծ գրող Լուի Արագոնին, ովքեր դաժանաբար հետապնդում են և դեպի մահ ուղարկում միլիոնավոր մարդկանց դեմոկրատիայի թշնամիների դեմ պայքարելու պատրվակով: Մենք բողոքում ենք ազատութեան համար մղվող այս կեղծ խաշակրաց արշավանքի դեմ, քանի դեռ մերժված է Հնդկաստանին ազատութուն տալը: Մենք բողոքում ենք այս «պատերազմ հանուն դեմոկրատիայի» արյունոտ կառնավալի դեմ, քանի դեռ ԱՖրիկային և Հնդկա—Չինին մերժված է այդ դեմոկրատիայի նույնիսկ ամենահամեստ ձևը»:

Ռեակցիայի հարձակում, սպիտակ տեռորի որդիաներ են տեղի ունենում վոչ միայն պատերազմող յերկրներում: Հենված իրենց հլու լակեյների՝ սոցիալ—դեմոկրատիայի ռեակցիոն ղեկավարներին վրա, Ֆինանսական կապիտալը պատերազմն ոգտագործում է նաև չեղոք յերկրներում իբրև պատրվակ ուժեղացնելու գրոհներն աշխատավորների քաղաքական իրավունքների ու ազատութեան, սոցիալական նվաճումների վրա:

«Չեղոք» Բելգիայի զինվորական կաբինետը պատերազմ հայտարարվելուց անմիջապես հետո վերացրեց ութժամյա աշխատանքային որվա որենքը: Գործազուրկներին մորելիզացիայի յեն յենթարկում և ստիպում հասարակական ու ռազմական աշխատանք կատարել անսահմանափակ աշխատանքային որվա ընթացքում խղճուկ աշխատավարձով: Գործազուրկավորների ժողովները, կոմունիստական կուսակցութեան ժողովներն արգելվում են: Կոմունիստական կուսակցութեան լրագրեր «Վուա դյու Պյուպը», «Սետ Ֆլամաշե Ֆուդը» և կուսակցութեան ու կոմյերիտմիութեան մի շարք ուրիշ հրատարակություններ բռնազրավում են և

վերջին հաշիվով փակվում: «Առ դյու Պյուլի» խմբագիր ընկ-
կենները ձեռքառված են: Մամուլն ամեն օր հաղորդում է այն
մարդկանց ձեռքառվելու մասին, վորոնք տարածում են կո-
մունիստական թուղիկներ: Կոմունիստական կուսակցութան
պաշտոնատար անձերի մոտ կատարվող խուզարկութունները
օրակարգի մեջ են մտել:

Բելգիայում ցենզուրան արգելում է Մեծ Բրիտանիայի քա-
ղաքականութունը քննադատող լրագրերը, բայց թույլ է տալիս,
վոր բուրժուական և սոցիալ-դեմոկրատական մամուլը կատարի
հալածանք մղի Խորհրդային Միութան դեմ: Բելգիայում թույլ-
առված են այն ժողովները, վորոնց նպատակն է գինիորներ
հավաքագրել Ֆրանսիայում կազմակերպվող լեհական լեգիոնի
համար, բայց արգելվում են սրտերազմի հակառակորդների ժո-
ղովները:

Թանգութան աճումը և կատարյալ ուժեղացող հարձակումն
առաջացրել են գործադուլների ալիք: Այս գործադուլների պա-
տասխան հանդիսացան ձեռքառվածությունները, ժողովների ար-
գելումը և ռեակցիայի հիստերիկ աղաղակները, վորը պահան-
ջում է ցրել կոմունիստական կուսակցութունները: Բելգիայում
կատարվող են հետապնդվում են քաղաքագիրները: Նրանք փաս-
տորեն հայտարարված են որենքից դուրս, նրանց աքսորում են
կամ ներկայում համակենտրոնացման ճամբարներում:

Շվեյցարիայում այնքան գովված բուրժուական դեմոկրատիան
վերացված է Իսչնակից խորհրդի դեկրետով, վորը հրատարակ-
վեց սոցիալ-դեմոկրատիայի կողմից կառավարութանը տրված
լիազորութունների հիման վրա: Ամբողջ օրենսդրական և կա-
տարողական իշխանութունը փաստորեն կենտրոնացված է գինի-
վորականների ձեռքում: Շվեյցարիայում գտնվող քաղաքագիր-
ները բանտ են նետված: Բայլ առ քայլ ջլատվում է կոմունիս-
տական կուսակցութան գործունեությունը, վորն արդեն վա-
ղուց արգելված է ժրնեի, Վադաի և Նեյնբուրգի կանտոննե-
րում: Նրա մամուլը բռնազրավվում է ռազմական հրամանատա-
րութան կամ կառավարութան արտաքին քաղաքականութան
ամենաչնչին իսկ քննադատութան համար: Իլիալոբ շտաբն ար-
գելել է կոմունիստական կուսակցութան օրգան «Ֆրայհայտը»:
Նույնիսկ «Բադելեր Նացիոնալցայտունը»¹ հետևյալ կերպ է
բնորոշում զրուլթունը Շվեյցարիայում:

1 «Բադելեր Նացիոնալցայտունը» — լիբերալ լրագիր, վոր կարգում են մանր
բուրժուակայի լայն խավերը:
22

«Յեթե հանդես գա արգելումների նոր սերիա, յեթե մենք
դրանց նորից տեսնենք հայտասյուններին փակցված, ապա,
դրանք կարգավով, մենք չպեաք է խմանանք, թե, իսկապես
ասած՝ ել ինչ է թույլատրվում (բացի հարկերը վճարելուց) ...
Մենք շատ կուզեյինք կրկին դառնալ «ազատ շվեյցարացիներ»,
ինչպես յերգելում է հին յերգերում: Բայց հենց այդ դոյութուն
չունի այլևս»:

Սկանդինավյան յերկրներում սոցիալ-դեմոկրատական պրե-
մյեր-միլիտարները ձեռք ձեռքի տված իրենց բուրժուական կոլե-
գաներին, ոգտագործում են պատերազմի ստեղծած սխտա-
ցիան՝ աշխատավորների դեմոկրատական իրավունքներն ու ազա-
տությունները վերացնելու համար: Շվեյցարիայում բռնազրավում
են կոմունիստական մամուլը, յեթե նա փորձ է անում մերկաց-
նել սրտերազմի հրձիգներին, և դատի յեն տալիս նրա խմբա-
գիրներին: ՄՈՊՐ-ի շվեդական սեկցիան զրկվեց պետական այն
սուբսիդիայից, վոր մինչև այժմ նրան տրվում էր նպաստ ստա-
ցող քաղաքագիրների համար: Ֆիննական քաղաքագիրները
հանձնվում են մաններհեյմյան դահիճներին:

Բոլոր սկանդինավյան պետութուններում անողորմաբար հա-
լածում են կոմունիստներին: Իրենց ձայները միացնելով միաս-
նական ռեակցիոն խմբերին, բուրժուական և սոցիալ-դեմոկրա-
տական մամուլի օրգանները պահանջում են արգելել կոմունիս-
տական կուսակցութունները և բոլոր այն կազմակերպութուն-
ները, վոր պայքարում են իմպերիալիստական պատերազմի դեմ,
նրանք զրպարտում են Խորհրդային Միությունը:

Հորանդիայում, պատերազմը հայտարարվելուց անմիջապես
հետո, հաշվետես սկսվեց դեմոնիստիկ, ալտերիական և այլ
քաղաքագիրների հետ: Ամստերդամում ձեռքառվեցին գեր-
մանական շատ քաղաքագիրներ, վորոնց ներկայել են վանքը:
Այն հոլանդացիները, վորոնք կուլել են Իսպանական հանրապե-
տութան ազգային բանակում ինտերնացիոնալ բրիգադների մեջ,
դատի յեն տրվում և դատապարտվում բանտարկութան:

Հրեշավոր չափերի հասավ սպիտակ տեռորը հոլանդական
գաղութներում: Միմիայն Յավայում կա 50 հազար քաղաքական
բանտարկյալ: Ազգային ազատութան մարտիկներն աքսորվում
են «հասարակական անդորրութան ու կարգի» դեմ գործած
ամենաչնչին հանցանքի համար: Այսպես, քաղաքական խմբակներ
կազմակերպելու համար դատապարտում են յերկարամյա հար-
կադրական աշխատանքների:

Այն, ինչ ներկայումս տեղի չէ ունենում Միացյալ Նահանգներում, սաստիկ հիշեցնում է այն նախերգանքը, վոր նախորդեց Հյուսիսային Ամերիկայի համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմի մեջ մտնելուն: Պատերազմող պետությունները (կարգա՝ Անգլիա և Ֆրանսիա) զենք արտահանելու եմքարգոյի վերացումն ուժեղացրեց ամերիկյան Ֆինանսական կապիտալի ախորժակը: Հաղարալոր ազահ՝ ձեռքեր են ձգվում ուկիկանոսի վրայով, վորպեսզի շահեն ու կողոպտեն յեվրոպական ուղղմական արդյունարերողների հետ սերտորեն ու համերաշխ:

«Ամերիկյան հեռու պիտի մնա պատերազմից»—այս լողունգոլ են հանդես գալիս ԱՄՆ կոմունիստական կուսակցութունը, արհմիությունները, ՄՈՊԲ-ի ամերիկյան սեկցիան, Խաղաղության և ազատության պայքարի լիգան: Այս բոլոր և ուրիշ պրոգրեսիվ կազմակերպություններ պայքարում են Ամերիկային պատերազմի մեջ զբաղվելու դեմ, կապիտալի և ռեակցիայի հարձակման դեմ:

Այս կազմակերպությունների բացատրական կոմպանիան յերևան է հանում Ուոլլ-ստրիտի իմպերիալիստների քաղաքականության խեղական աստուղ: Ժողովրդական մասսաներն ավելի ու ավելի հստակ կերպով են ըմբռնում, վոր Ֆինանսական մարդնասներն ամենից առաջ շահագրգռված են ուղղմական բարձր շահույթ դիզելով, իմպերիալիստական կոնկուրենտներին համաշխարհային շուկայից դուրս մղելով, իրենց իմպերիալիստական դիրքերն ամրացնելով, իրենց տիրակալությունը ծուլերի ու ուկիկանոսների վրա հաստատելով ու ամրապնդելով:

ԱՄՆ կոմունիստական կուսակցությունն անդադրում, որըորին մերկացնում է կառավարության արտաքին ռեակցիոն քաղաքականությունը: Կոնկրետ որինակներով նա ցույց է տալիս, վոր Վաշինգտոնն իր առևտրական քաղաքականությամբ, ռեակցիոն կուսակցություններին ու բանդաներին պաշտպանելով փորձում է տապալել Մեքսիկայի, Չիլիի և Կուբայի ժողովրդական կռավարությունները: ԱՄՆ կոմունիստական կուսակցությունը նշալակում է ամերիկյան մոնոպոլիստական կապիտալը, Ֆիլիպինյան կղզիների ու Պորտ-Ռիկոյի գաղութային ժողովուրդների այդ ամենակատաղի շահագործողին ու կեղեքողին, վորը հանկարծ իր մեջ սեր է գտել դեպի ազատությունն ու դեմոկրատիան:

Ամերիկյան ռեակցիան կատաղի հալածանք է ծավալել կոմկուսակցության և ուրիշ պրոգրեսիվ կազմակերպությունների դեմ: Բուրժուական և սոցիալ-դեմոկրատական մամուլն ամենինչ անում է, վորպեսզի հասնի կոմունիստական կուսակցության և պատերազմի դեմ պայքարող բոլոր կազմակերպությունների արգելման: Այդ մամուլի եջերում պղտոր հեղեղի նման հոսում է կեղծիքը, զրպարտությունը, մատնությունները կոմկուսակցության դեկավարների և խաղաղության համար բոլոր մարտնչողների դեմ: Սուտ տեղեկությունները մեկը մյուսին առաջ են տալիս: Ամենավայրենի լուրեր տարածելով, ուզում են ստեղծել «հուզված հասարակական կարծիք»: Ջանում են լինչի դատարանի միջոցրտ ստեղծել ընդդեմ կոմունիստների, ընդդեմ միջազգային համերաշխության կողմնակիցների, ընդդեմ բոլոր նրանց, ովքեր պաշտպանում են տարրական քաղաքացիական իրավունքները, խաղաղությունը: Ուոլլ-ստրիտի պարոնները շատ լավ գիտեն, վոր իրենց պլանները կիրականանան միայն ընդդեմ ամերիկյան ժողովրդի կամքի, միայն լիկվիդացիայի յենթակելով բուրժուական դեմոկրատիան: Յեվ նրանք ձեռք են առնում բոլոր անհրաժեշտ նախապատրաստական միջոցները:

Կոնգրեսի նշանակած այսպես կոչված Դայսի կոմիտեն պետք է հետադոտի «վոչ-ամերիկյան» կազմակերպությունների գործունեյությունը: Այժմ այդ կոմիտեն զբաղված է նրանով, վոր հարձակումներ է կազմակերպում կոմունիստական կուսակցության, ՄՈՊԲ-ի, Խաղաղության և ազատության պայքարի լիգայի շնքերի վրա և այն, պահանջում է այդ կազմակերպությունների անդամների ցուցակները և հարցաքննում դեկավար ընկերներին: Դայսի կոմիտեն ստեղծել է ռենեգատների, շտրայկբրեյկերների, տրոցկիստների և այլ տականքների մի խումբ, վորը հրապարակով հանդես է գալիս կոմունիստները ոտար պետումամբ ցուցմունք է տալիս, վոր կոմունիստները ոտար պետություններից ոտճիկ ստացողներ են: Այս կոմիտեյի կարգադրությամբ վերջերս ձերբակալեց կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Եու Բրաուզերը պասպորտն ստանալիս տված իրր թե սխալ տեղեկությունների համար: Այս նույն կոմիտեյի մատնությամբ հալածանքներ են սկսված մի շարք արհմիութենական ակտիվիստների և կոմունիստական կուսակցության դեկավարների դեմ: Այս կոմիտեյի նախազահ դեպուտատ Մարտին Դայսը կոմունիստական կուսակցության նախազահ ընկ. Ֆոստերին հայտարարել է հետեյալը.

«Ձեզ կարգելեն, ձեզ որենքից դուրս կղենն, ինչպես արել են Ֆրանսիայում և ինչպես պետք է անել ամբողջ աշխարհում»:

Թե վորքան հեռու յեն զնացել ուսակցիոն պլանները ԱՄՆ-ում, ցուցց ե տալիս այն փաստը, վոր վերջին ամիսներս կոնգրեսում ընդունված են մի շարք տեոքրիստական որենքներ: Այդ որենքներով նախատեսվում է ստեղծել ցմահ համակենտրոնացման ճամբարներ, բանտարկել առանց դատի ու քննութան, տակնուվրա անել բանվորական կազմակերպությունները, արգելել գործադուլները և բռնազրախել «դավադրական» գրականությունը:

* * *

Բուրժուազիայի տեոքրիստական արշավանքի պատկերը լրիվ չեր լինի, յեթե մենք լուսինք սոցիալ-դեմոկրատիայի ուսակցիոն ղեկավարներ Բլյումների, Ժուոնների, Նատլինների, Միտրինների և ղե-Մանների անպատկառ ղերի մասին: Ներկա պատերազմի նախադրյալն է հանդիսանում մասսաների խաբեյությունը, բանվոր դասակարգի պառակտումն ու կազմալուծումը, հեղափոխական ավանդարդի ժամանակավոր մեկուսացումը բանվորագյուղացիական լայն մասսաներից: Սոցիալ-դեմոկրատիայի ողնության պատճառով իմպերիալիստական պատերազմը դարձավ արյունոտ իրականություն:

Սոցիալ-դեմոկրատիայի համար իմպերիալիստական պատերազմը շարունակությունն է նրա նախկին քաղաքականության՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմին դավաճանելու, ուսակցիայի և հակահեղափոխության հետ գործակցելու: Յերբ իսպանական ժողովուրդը պայքարում եր իր ազատագրության համար, դա «չմիջամտելու» քաղաքականությունն էր, վոր հնարել եր Ֆրանսական սոցիալիստական պարագլուխ Բլյումը և հաջորդությամբ կիրառում եր Ֆրանսական և անգլիական իմպերիալիզմը: Սոցիալ-դեմոկրատիայի ուսակցիոն ղեկավարներն ամեն ինչ արին, վորպեսզի խորտակեն հողուտ Իսպանիայի ստեղծված համերաշխության միասնությունն ու համախմբվածությունը, վորպեսզի կազմալուծեն այդ շարժումը: Հերոսաբար մարտնչած իսպանական ժողովրդի պարտությունն անխղիճորեն կապված է II Ինտերնացիոնալի ուսակցիոն ղեկավարների անվան հետ, Միտրինի և Բլյումի անվան հետ, ճիշտ այնպես, ինչպես բացահայտ դավաճանությունն այդ պայքարում կապված է իսպանական սոցիալ-դեմոկրատներ Բեռտեյրոյի, Կարայերոյի և Պրիետոյի անվան հետ:

«Խաղաղություն արդյունաբերության մեջ» մշտապես յեղել է անգլիական լեյբորիստական կուսակցության ուսակցիոն ղեկավարների լողունը: Այս քաղաքականությունն այժմ վարում են այնքան լայնորեն, վոր պատերազմը հայտարարվելուց անմիջապես հետո լեյբորիստական կուսակցության ներկայացուցիչներն սկսեցին աշխատել ծովակալության մեջ, ռազմական մինիստրության, ավիացիայի մինիստրության և ինֆորմացիայի մինիստրության մեջ իրրև «կապի մարդիկ»: Տրեդ-յունիոնների Գլխավոր խորհուրդը 15 ներկայացուցիչ ուղարկեց այսպես կոչված Արդյունաբերական խորհուրդը: Այստեղ «բանվորների ներկայացուցիչները» ձեռնարկատերերի ու կառավարության 15 ներկայացուցիչներին հետ միասին քննարկում են «հասարակական նշանակության բոլոր հարցերը», այսինքն այն հարցերը, թե ինչպես ճնշել գործադուլները, իջեցնել աշխատավարձը, ջլատել բանվորների հակապատերազմական յելույթները և այլն:

«Իեյլի Տեյեզրաֆ ենդ Մորնինգ Պոստ» պահպանողական լրագիրը լիակատար իրավունքով կարող է գրել: «Իեո յերբեք պատմության մեջ չի յեղել Դաունինգ-ստրիտի (պրեմյեր-մինիստրի ուղեղենցիան) և բանվորական շարժման ներկայացուցիչների այնպիսի սերտ ու բարեկամական կոնտակտ, ինչպես վերջին ամիսների ընթացքում: Վաշ մի միջոցառում, վոր կարող եր ազդել բանվորների դրության վրա, չի ընդունվել առանց խորհրդակցելու սըր Վալտեր Միտրինի և տրեդ-յունիոնների կոնգրեսի նրա կոլեգաների ու ուղղիցիայի ղեկավարների հետ: Նրանց վստահում են պետական գաղտնիքներ...» Հարգելի ջննարկներն իրոք արժանի յեն իրենց գործատուների վստահության:

II Ինտերնացիոնալի ուսակցիոն ղեկավարները պատերազմի ակտիվ հրձիգներն են, ծայրահեղ ուսակցիայի պաշտպանները, միջազգային ուսակցիայի առաջավոր շուկատը պրոլետարիատի այն մասսայական պայքարի ճնշումը կազմակերպելու մեջ, վոր նա մղում է ընդդեմ պատերազմի և խորհրդային Միության դեմ պատրաստվող հակահեղափոխական պատերազմի:

Բոլոր կապիտալիստական յերկրներում սոցիալ-դեմոկրատները քաղաքացիական խաղաղություն են կնքել բուրժուազիայի հետ: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության անգլիական ու Ֆրանսական պարագլուխները և արձմիությունները ղեկավարները համաձայնողական կոմիտե յեն ստեղծել անգլիական և Ֆրանսական ձեռնարկատերերի հետ համագործակցելու համար: Ֆրանսական արձմիությունների ղեկավարների այժմ մղած «դա-

սակարգային պայքարի» մասին դադարի կարելի չե կազմել այն փաստի հիման վրա, վոր Փարեղի արհմիությունների նխտերը տեղի չեն ունենում վոստիկանական պրեֆեկտուրայում, վոստիկանական պրեֆեկտի և ձեռնարկատերերի միության ներկայացուցիչներին ներկայությամբ:

Բլյումի և նրա գործակիցներին նախաձեռնությամբ, նրանց համառ պահանջով Պրանսիայի կոմունիստական կուսակցությունը արգելեց և նրա ղեկավարները ձերբակալեցին: Պատյամենտի սոցիալիստական Ֆրակցիան Բլյումի կազմած (1939 թ. հոկտեմբերի 5-ին) բանաձևով հալանություն և տալիս կոմունիստական կուսակցության ակտիվիստների, ղեպուտատների ու անդամների ձերբակալմանը: Բլյումն ուզում եր, վոր իր բարեկամ Դալադյեն, արգելելով կոմունիստական կուսակցութունը, նրա մամուլը, ձերբակալելով նրա ակտիվիստներին, ազատի իրեն Պրանսիայի բանվորներին առջև իր դավաճանության, իր հակախորհրդային հալածանքի համար պատասխան տալու անհրաժեշտությունից:

Պրանսիայի սոցիալիստական կուսակցության կենտրոնական օրգան «Պոպուլերը» դարձել և վոստիկանական պրեֆեկտուրայի օրգանը: Մասսայական առաջին ձերբակալությունների օրերին այս լրագրում կարելի չեր կարդալ հետևյալը. «Կոմունիստական կուսակցության վոչնչացումը չի կարող իրականացվել միայն սովորական օրենքներով. ամենից առաջ հարկավոր և վոչնչացնել կարգերն ու կազմակերպությունը: Մա կառավարության գործը չե, այլ մեր ընդհանուր գործը: Մեզ նից վոմանք այս գործին ավելի շուտ ձեռնամուխ յեղան, քան յերբ պատերազմը թեթևացրեց մեր անելիքը»:

Սոցիալ-դեմոկրատ ղեպուտատների մատնությամբ ձերբակալեցին կոմունիստ ղեպուտատները: Միքանի վայրերում կոմունիստական ակտիվիստների ձերբակալությունները տեղի ունեցան սոցիալ-դեմոկրատ քաղաքագլուխների անմիջական կարգադրությամբ: Սոցիալ-դեմոկրատ պարագլուխները իշխանության ձեռքն ելին մատնում այն արհմիութենական ակտիվիստներին, վորոնք հրաժարվել եյին պաշտպանելու պատերազմական քաղաքականությունը և մասնակցելու հակախորհրդային հալածանքին: Նրանք ամեն ինչ անում եյին, վորպեսզի պառակտեն բանվորական կազմակերպությունները, թուլացնեն նրանց և զրանով իսկ անդեն հանձնեն վոստիկանության ձեռքը: Սոցիալ-դեմոկրատական չինովներին ակտիվ աջակցությամբ հարյու-

րավոր արհմիութենական կազմակերպություններ դուրս չալրտվեցին շենքերից, իսկ պաշտոնատար անձերը ձերբակալեցին: Պրանսական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարները այս բոլոր միջոցառումները հանդեպին այն բանին, վոր Պրանսական արհմիությունների հինգ միլիոն անդամներից մնաց միայն մեկ միլիոն:

Բլյումն ու նրա համախոհներն անդադար պահանջում են ամենածանր դատալծիոներ կոմունիստներին դեմ: Յերբ Պրանսական ծանր ինդուստրիայի օրգան «Թանը» դավաճանություն անվանեց կոմունիստների հակապատերազմական գործունեյությունը, Բլյումը «Պոպուլերում» հետևյալ խորհուրդը տվեց կառավարությանը. «Յեթե առանձին կոմունիստներ մեղացվեն դավաճանության մեջ, ապա նրանց պետք և հետապնդել և պատժել իրեն դավաճանները»: Փառարանելով Լոնդոնի Սիտի տեբերին՝ «ազատության անչահասեր մարտիկներին» և Փարեղի բիրթեկիներին վոչնչալը՝ այդ «դեմոկրատիայի պաշտպաններին», Բլյումը մահապատիժ և պահանջում կոմունիստների համար:

Ճիշտ այդպես են պահում իրենց օրել յերկրների սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարները: Բելգիական սոցիալիստական կուսակցության նախագահ դե-Մանը հրապարակով պահանջում և վերացնել բոլոր դեմոկրատական ազատությունները և ստեղծել ղիրեկտորիա ղեկատորական լիազորություններով: Շվեյցարիայում արխիեպիսկոպոս Մոստի և սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարների համատեղ խորհրդակցության մեջ վորոշում ընդունվեց կուսակցությունից վտարել Լեոն Նիկոլին և Պրանսական Շվեյցարիայի ամբողջ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը նրա համար, վոր այդ կազմակերպությունն նրոտահայտվել և ընդդեմ պատերազմի, հոգուտ Սորհըրդային Միության իտաղադարար քաղաքականության:

Ռեակցիոն բուրժուազիան ամեն կերպ փառարանում և սոցիալ-դեմոկրատական ղեկավարների դավաճանական գործունեյությունը: Յերբ սոցիալ-դեմոկրատները պառակտեցին Բագելի խորհրդի բանվորական մեծամասնությունը՝ կազմված կոմունիստներից ու սոցիալ-դեմոկրատներից, բուրժուական բլոկի ղեկավար դոկտոր Շերերն ասաց, վոր նա և իր հետ միասին բոլոր բուրժուական կուսակցությունները հասել են հրձվալի օրվան: Այն մեղադրանքները, վոր սոցիալ-դեմոկրատներն այժմ առաջադրում են կոմունիստներին դեմ, բուրժուական կուսակցությունները վաղուց են գործի դրել: Ուստի նրանք վորոշել են ոգտվել

ստեղծված դրուժյունից և առաջարկ մտցնել կոմունիստական կուսակցութեանը ցրելու մասին: Լիբերալ կուսակցութեան ղեկավարներէն մեկը՝ Ռիտմեյրն ընտրական ժողովում հայտարարեց. «Յեա ուրախ եմ, վոր սոցիալ-դեմոկրատիան հրաժարվել և կարմիր դրոշից հուսանք, վոր մենք բոլորս փորձութեանը կգլխմանանք հրով, յեթե յերբեկցե կոմունիզմը շարժվի մեր սահմաններէ վրա...»

Բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակցութեաններէ՝ ղեկացիոն ղեկավարները պահանջում են արգելել կոմունիստական կուսակցութեանները: Սոցիալ-դեմոկրատական «Նոյեք Տորվերտս» լրագրի գլխավոր խմբագիր Շտամպֆերը պնդում և այն բանի վրա, վոր «նոր Գերմանիայում» արգելի կոմունիստական կուսակցութեան գործունեութեանը:

Սկանդինավյան յերկրներում ամենից մերկապարանոց ու ղեկացիոն դիրքը Խորհրդային Միութեան և կոմունիստներէ դեմ զբաղվում են սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարները: Սոցիալ-դեմոկրատիայի նախաձեռնութեամբ խաղանական մարտիկներին ոգնող Շվեդիայում գտնված կոմիտեն վերածվեց բարոն Մաններհայմին և նրա բանդային ոգնող կազմակերպութեան, իսկ Ֆինլանդիայի սոցիալ-դեմոկրատ միևիտոր Տանները այդ բանդայի ղեկավարներէն մեկն է: Ինտերնացիոնալի հանձնարարութեամբ նա ամեն ինչ արավ, վորպեսզի խանդարի Խորհրդային Միութեան հետ խաղաղ համաձայնութեան դալուն, իսկ այժմ նա դաժան հաշիտես և կատարում Ֆինլանդիայի հեղափոխական բանվորների հետ: Ֆիննական արհմիութեաններէ սոցիալ-դեմոկրատական կենտրոնական կոմիտեն հատուկ կոչով գլխաց իր սնդամներին, հրալիրելով նրանց Ֆիննական դադանի վոստիկանութեանը տեղեկացնել իրենց ձեռնարկութեան մեջ տեղի ունեցող ամեն մի «կասկածելի անցուղարձի» մասին:

Ինտերնացիոնալի ղեկավարները կազմակերպում, պաշտպանում և ամեն կերպ գովերգում են աշխատավորների դեմ ուղղված տեռորը: Նրանք ծաղրանքի յեն յենթարկում տեռորի գահերին: Չիս բուրժուազիայի այնպիսի վոճրագործութեան, վոր զերագանցած չլինեն լակեյական այդ սրիկանները:

ՊԱՅԲԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԵՎ ՌԱԶՄՍԿԱՆ ՏԵՌՈՐԻ ԴԵՄ

Կատալի տեռոր և թագավորում պատերազմող յերկրներում: Ռեակցիան գլուխը բարձրացնում և «չեղոք» պետութեաններում:

Բայց, չնայելով վոչ մի բանի, հարյուր-հազարավոր մարդիկ համարձակ ու վճռականապես հանդես են գալիս Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի հաղթական դրոշի տակ ընդդեմ պատերազմի և ռազմական տեռորի:

Մասնաների զգաստացումը շատ ավելի շուտ սկսվեց, քան յենթարկում էլին պատերազմի խմբերխաղխտական հրճիղները: Խնամքով նախապատրաստված բոլոր խարուսիկ մանյովները, ստի ու զբաղարտութեան ամբողջ հեղեղը, սոցիալ-դեմոկրատական պերճախոսութեան ամբողջ ֆեյերվերկը—այս ամենն անցան նպատակի կողքից: Իմպերիալիստներին և սոցիալ-դեմոկրատիայի ղեկացիոն ղեկավարներին չհաջողվեց ստեղծել ռազմական մոլորեք, շովինիստական վոգելորութեան ու մասսայական պիխոզ, ինչպես եր 1914 թվականին:

Ամերիկյան «Նյու-Յորք Թայմզ Մեգեզին» ժուռնալի թղթակիցը նկարագրում և աշխատավորների տրամադրութեանը ֆրանսական փոքրիկ քաղաքում պատերազմը հայտարարվելուց հետո.

«Ընդհանուր տպավորութեանը, վոր մնում և քաղաքի բոլոր բնակիչներին հետ զրուցելուց հետո՝ դա ատելութեանն է դեպի պատերազմը: Բոլոր այն տղամարդկանց ու կանանց մեջ, վորոնց հետ յես խոսեցի, գտնվեց միայն մի յերիտասարդ, վորն արտահայտվեց հոգուտ պատերազմի: Դա ունեւոր ծնողների վորդի յե, վորը դեռ յերբեք ստիպված չի յեղել հոգալու իր ապրուստի մասին և վորը զորակոչին նայում և իրբե մի հաճելի զանազանակերպութեան իր պարսպ կյանքում: Մնացած բոլորը պատերազմի մասին խոսում էլին սարսափով ու զղվանքով»:

Ընկճվածութեան ու սարսափի, պատերազմի հանդեպ խոր ատելութեան եր իշխում Փարիզում պատերազմի առաջին իսկ օրից: Ամերիկացի թղթակից Ուլլեյ Չոնսոնը, վորի մասին մենք հիշատակեցինք վերև, նկարագրում և Փարիզը պատերազմի առաջին օրը.

«Պատերազմ հայտարարելու օրը ամբոխը մեարդում, ավտորուաներում ու փողոցում մտահոգ, յերկյուղած տեսք ունեք, թվում եք, թե մարդիկ հիմա կարտասվեն: Հազարավոր մունդրով տղամարդիկ խմբերով կամ վաշտերով մեկնում էլին ճակատ: Սա տեղի յեր ունենում լուռ, առանց վորեւ վոգելորութեան: Յես վոչ մի տեղ յերդ չլսեցի: Ամենուրեք կարելի յեր նկատել ընկճվածութեան, ճնշված լուրթյուն: Այսպես եր բնակ-

չության ու բանակի տրամադրութեանն ամբողջ սեպտեմբերի
ընթացքում»:

Թե վորքան մեծ է Յրանսիայի աշխատավորական մասսանե-
րի առեւտրութեանը դեպի պատերազմը, ցույց է տալիս այն փաս-
տը, վոր խոր ընդհատակ քչված, հայածվող ու հետապնդվող
կոմունիստական կուսակցութեանն ի վիճակի յե վոչ միայն շա-
րունակելու, այլև ուժեղացնելու իր պայքարն իմպերիալիստա-
կան պատերազմի դեմ: Յրանսական ներքին գործերի մինիստր
Սարրոն դեկտեմբերի կեսերին Փրանսական պալատում արտա-
սանած իր ճառում ասաց.

«Հարյուր-հազարավոր բանվորներ դեռևս հավատարիմ են
մնացել կոմունիստական սկզբունքներին. գոյութեան ունեն մե-
ծաքանակ ապաստարաններ, վորտեղ կարող են թաղնվել նրանց
հետապնդվող քաղաքական բարեկամները, վորտեղ բազմացվում
են անխեղալ թուուցիկներ, վորոնք այնուհետև տարածվում են
Փարիզիկաներում: Անկասկած է, վոր կոմունիստական պրոպա-
գանդը կչարունակվի»: Այնուհետև նա ասաց. «Կարող եմ հա-
վաստիացնել ձեզ, վոր յես՝ ներքին գործերի մինիստրս, կոմու-
նիստների դեմ սեպտեմբրի միջոցներ գործադրելով է միայն վոր
գրադվում եմ»:

Թե վորքան քիչ արդյունավետ է այդ «գրադմունքը», ցույց
է տալիս պալատի նույն նիստում դեպուտատ Իբարնեզարեյի
(դե լա Ռոկի կուսակցութեան անդամ) արած հաղորդումը: Այս
ուսակցիոն դեպուտատը դառնորեն դանդաղում էր, վոր կոմու-
նիստական կուսակցութեան ղեկավարներից շատերին հաջողվել է
խույս տալ վտտիկանութեանից, վոր Տորեզը հնարավորութեան
ունի գրելու անխեղալ «Յումանիտեյում» և այնտեղ ինտերվյու
գետեղելու կուսակցութեան անպայման հաղթութեան մասին:
Իբարնեզարեն ասաց.

«Կոմունիստներն իրենց գլուխը բարձրացնում են Կլերմոն-
Ֆերրանում, Թուլուզում, Հալբում և Փարիզի մարզում: Ձեռ-
նարկութեաններում աշխատանքի տեմպն իջնում է, տեղի յեն
սեննում իտալական գործադուլներ, դադարահաները կանգ են առ-
նում նորոգման պատրվակով, իսկ բանվորների մեջ թուուցիկներ
են տարածվում: Յեկ այս քայքայիչ աշխատանքը կատարվում է
մեծ յեռանդով: Մեծ քանակութեամբ պրոկլամացիաներ են տա-
րածվում: Անկասկած, գոյութեան ունի կոմունիստական մաս-
սայական կազմակերպութեան. գործարանները լիքն են կոմու-
նիստներով»:

Փրանսական մամուլից մենք համարյա ամեն ոք իմանում
ենք, վոր ամբողջ յերկրում վաճառվում են կոմունիստական ան-
ընդալ լրագրեր և տարածվում թուուցիկներ: Ամենուրեք 50 սան-
տիմով վաճառվում է անխեղալ հրատարակված «Յումանիտե»: Միայն
Փարիզում ու շրջակայքում որական տարածվում է 20
հազար որինակ անխեղալ «Յումանիտե»: 100—150 հազար բան-
վոր ամեն ոք կարդում են այդ լրագիրը: Ռենո գործարանում
«Յումանիտեյի» յուրաքանչյուր համարը միջին հաշվով կար-
դում են 50 բանվոր: Մետաղագործների արհմիութեան սոցիալ-
դեմոկրատ քարտուղարը փրփուրը բերնին աղաղակում է «Ան-
դիկա» ժուռնալում, վոր կոմունիստական գործունեյութեանը
չարունակվում է մետաղադրուներութեան բոլոր ձեռնարկու-
թեաններում. չկա մի ուղղակի խոչոր գործարան, վորտեղ
այդ պրոպագանդան չմղվի: Անհրաժեշտ է արձագանգել դրան:
Իավական չե հողվածներ գրել լրագրերում. չպետք է թերադնա-
հատել մեծ փորձառութեան ունեցող թշնամուն:

«Գրենդուար» ուսակցիոն լրագիրը գրում է կոմունիստների
աշխատանքի մասին բանակում. «Ներկայումս այդ աննկատելի
պրոպագանդան դեռ այնքան էլ վտանգավոր չէ, բայց նկատի յե
ստնված վաղվա համար, այն ժամանակվա, յերբ ժողովուրդը
հոգնած կլինի և բարոյալքված»: Նույն լրագիրը հաղորդում է,
վոր տաքսիների շոֆերները, մանրը վերադարձնելով ճամբորդին,
միաժամանակ նրա ձեռքն են ճխտում «Յումանիտեյի» անխեղալ
համարը կամ թուուցիկ: Այլոթուսների ճամբորդները նույնպես
կոմունիստական թուուցիկներ են գտնում իրենց նստատեղերում:
Սանութներում գտնմներ կատարելիս այդ թուուցիկները հայտա-
բերում են տանտիրուհիների պարկերում, արկղներում կամ
սոպրակներում: Մեքենագրած թուուցիկները ներս են իցկում
բնակարանների դռների տակից, զգվում են փոստարկղները,
փակցվում են Փարիզիկաների պատերին: Կոմունիստական կու-
սակցութեան յոգունդները անցնում են բերնե-բերան: Լրագիրը
գանդատվում է. «Կոմունիստական լիազորներն ամենուրեք մտնում
են իրենց պոստերում և շարունակում իրենց գործունեյու-
թեանը»:

Այո՛, Փրանսիայի կոմունիստներն իրենց մարտական պոս-
տումն են: Նրանք գործում են Կոմունիստական Ինտերնացիոնալի
ղեկակալ ընկ. Դիմիտրովի կոչի համաձայն՝ «Պարզաբանել,
պարզաբանել և մի անգամ էլ պարզաբանել մասսաներին իրերի
իսկական դրուքյունը»: Փրանսիայի Կոմունիստական Կուսակցու-

Թյունը ապրում ու մարտնչում է ընդդեմ իմպերիալիստական պատերազմի ու կապիտալիստական ունակցիայի: «Շոկ» լրագիրը հաղորդում է, վոր «կոմունիստական Թուրքիկներ կարելի չէ դանդաղափենքում և զործարաններ ճանդերձարաններում»: Նույն լրագիրը մեջ է բերում ունակցիոն դեպուտատ Ֆերմանդ Լորանի բնորոշ հայտարարությունը ուղղակիան զործարաններում աշխատելու համար ուղղաճակատից վորակյալ մետաղազործ րանվորներին հետ կանչելու առթիվ: Նա ասել է. «Հուսանք, վոր հայրենիք հետ կանչված մարդկանց մեջ դանդում են մետալուրգիայի մասնագետներ միայն, բայց վոր կոմունիստական պրոպագանդայի մասնագետներ»: Այս հույսը խարուսիկ է: Լանք, թե ինչ է դրում Ֆրանսական գինվորն արդեն հիշատակված նամակում՝ ուղղված Բրյուսսելի «Վուա դյու Պյոպլ» լրագրին.

«Ինձ հետ մի տան մեջ ապրող գինվորների ճշող մեծամասնությունը (այս թվում յերկու կաթոլիկ) համոզված են, վոր մենք կոպում ենք վոր թե գաղափարի համար, այլ հոգուտ թընդանոթային արքաների, վոր թե Լեհաստանի համար, այլ հոգուտ իմպերիալիստական տրեսաների: Մարդիկ մարշոլ քայլում են պարտականությունից դրդված, առանց վորեւե վորգեորության: Չնայած արգելքին, շատ են վիճում քաղաքականության շուրջը. գինվորները հաճախ բացարձակ հայտարարում են, վոր իրենք հավատում են Խորհրդային Միությանն ու կոմունիստական կուսակցությանը: Շարքի մեջ ու գորանոցի բակում կարելի չէ լսել, թե ինչպես գինվորները հեղափոխական յեղանակներ են սուլում կամ յերգում»:

Հակապատերազմական տրամադրություններն ուժեղ են Մեծ Բրիտանիայի աշխատավորության մեջ: Լեյբորիստ դեպուտատ Բյուկենենն անգլիական ստորին պալատում ասաց. «1914 թ. այսպիսի թշնամանք յես չեմ տեսել պատերազմի հանդեպ»: Բնակչության բազմազան խավերի ներկայացուցիչները կոմունիստական, սոցիալ-դեմոկրատական և բուրժուական մամուլին ուղղված հարյուրավոր նամակներում ամենակտրուկ կերպով դատապարտում են պատերազմը և պահանջ առաջադրում շուտափուլից հաշտություն կնքելու: Միայն Լոնդոնի «Դեյլի Ուորկերը» 1939 թ. դեկտեմբերի 9-ին հակապատերազմական բանաձևեր է ստացել լեյբորիստական կուսակցության 75 կազմակերպությունից, 18 արհմիութենական խորհրդից, լեյբորիստական կուսակցության և արհմիութենական խորհուրդների 3 Ֆեդերացիայից, 74 տեղական պրոֆկազմակերպությունից, 3 արհմիութենական

զործկոմից, 5 զործարանային արհմիութենական կոմիտեյից և 27 կոոպերատիվ կազմակերպությունից: Այնպիսի մի հզոր կազմակերպություն, ինչպիսին է յերկաթուղայինների համամանդիական պրոֆմիսիոնումը, պահանջեց հրավիրել լեյբորիստական կուսակցության արտակարգ կոնֆերանս՝ քննելու այն միջոցները, վորոնք կհասցնեն պատերազմի ամենաարագ ավարտման:

Աշխատանքի միխիստր Բրուուսի տվյալներով, վորոնք մեջ են բերված անգլիական ստորին պալատում, մինչև 1939 թ. հոկտեմբերի 31-ը արձանագրված են 9-525 մարդ, վորոնք գինվորական ծառայությունից հրաժարվել են «խղճի դրդապատճառներով»: Այս անձերը գրանցվում են միայն դատական հատուկ վճռի հիման վրա: Նրանք պետք է ապացուցեն, վոր հրաժարվում են ուղղաճակատ դնելուց «խղճի դրդապատճառներով» և վոր թե սարսափից կամ քաղաքական համոզմունքների պատճառով: Չնայած «խղճի դրդապատճառներով» ուղղաճակատ գնալուց հրաժարվող մարդկանց արտաքին ապաքաղաքականությանը, նրանց արամադրությունները ցուցական են լայն մասսաների վերաբերմունքը դեպի պատերազմը բնութագրելու համար: Որինակի համար կանդ առնենք զործազուրկ ծառայող Թոմաս Ջեկ Լոուի դատավարության վրա:

Լոուն գինվորական ծառայությունից հրաժարվեց «խղճի դրդապատճառներով»: Դատարանի առջև իրըն վկա կանգնեց Լոուի հայրը: Դատավորի հարցին նա պատասխանեց. «Պատերազմը կեղտոտ ու նողկալի գործ է»: Այս խոսքերը բուռն հավանություն գտան սրահում գտնված բազմաթիվ ունկնդիրների մեջ: Յերբ նախագահը սպառնաց սրահը մաքրել, լսվեցին բարձրաձայն բացականչություններ. «Դիկտատորա»: «Մենք պահանջում ենք ազնիվ խաղ»: «Դատավարությունը դանդակ չպիտի լինի»:

Վկան պետք է պատմեր այն մասին, թե նա ինչ որեր է անցրել համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ. «Յես ստիպված յեղա ուղղաճակատի կյանքից հետո 5 տարի ընկած մնալ հիվանդանոցում, ընդվորում յես կախում ունեյի ուրիշ մարդկանց բարեգործությունից: Յես վորոշեցի իմ վորդուն դատարակել հակապատերազմական վողով և վոր մի կերպ թույլ չտալ, վոր նա մասնակցի աղբիսի նողկալի և կեղտոտ գործի... Յես, —չարունակեց վկան, —կամալոր գնացի պատերազմ, վորովհետև յես Ֆերմա ունեյի կանադայում և ինձ ասացին, վոր յես այն պետք է պաշտպանեմ դերմանացիներից: Բայց յերբ յես

վերադարձա, ապա համոզվեցի, վոր Ֆերման պետք եր պաշտպանել վոչ թե գերմանացիներէց, այլ նրանցից, ուրբեր ինձ պատերազմ ուղարկեցին»:

Այս սրտամածից հետո սրահում ե'լ ամէլի ուժգին ու տեհկան ծախհարութիւն լալեց: Այն ժամանակ դատարանը վորոշեց նիստը շարունակել դռնփակ:

Միքանի որինակ ևս: Նվագախմբի յերաժիշտ Գեորգ Գրանդը Մանչեստրում դատարանի առջ չայտարարեց, վոր ինքը չի ուզում սպանել այն մարդկանց, վորոնք վոչնչով չեն տարբերվում իրենցից: Նրա բարեկամ Ջոն Գոլդենն ասաց, վոր Անդրիասում բանվորը պաշտպանելու բան չունի: Նա չի ուզում ծառայել բանակում, վորովհետև ընտրական իրավունքներ չունի և չի ուզում լինել դահիճ և մարդասպան: Շոգեքարշական դործարանի բանվոր Գարոլ Դեմիսը հայտարարեց, վոր ինքը չի ուզում սնալ զինվորական ծառայութեան, վորովհետև մեծ դժվարութեամբ և աշխատանք ճարել, վորը թույլ և ամէլ նրան տնտեսութեան ձեռք բերել:

Ե'լ ամէլի ցայտուն կերպով են արտահայտում անդլիական լայն մասսաների հակապատերազմական տրամադրութեանները կոմունիստական կուսակցութեան միտինդներում ու ժողովներում:

Կոմունիստական սլոգանգանգան ընդգրկում և բնակչութեան գանազան խալեր: Որինակ, 1939 թ. դեկտեմբերի 10-ի հակապատերազմական ցույցի կապակցութեամբ կոմունիստական կուսակցութեան Լոնդոնի կազմակերպութեանը բաց թողեց հինգ գանազան թուուցիկներ: Գործարանային բանվորների համար հրատարակվեց 100 հազար թուուցիկ, վորոնց վերնագիրն եր՝ «Ձեր կենսական մակարդակը»: 100 հազար թուուցիկ անային տնտեսուհիների համար, վորոնց մեջ քննարկվում եր միջերջների գների հարցը: 50 հազար թուուցիկ Լոնդոնի ավտոբուսների ծառայողների, ինչպես նաև դործազուրկների ու թոշակառուների համար: Յուուցին մասնակցում ելին կոմունիստական կուսակցութեան 78 կազմակերպութեան, լողունք ունենալով՝ «Կորչի' պատերազմը»: «Կորչի' ազգային կառավարութեանը»: «Համերաշխութեան Սորհրդային Միութեան հետ»:

Սաղաղութեան ոգտին անդլիական յերիտասարդութեան կազմակերպած կոնֆերանսին մասնակցում ելին քաղաքական ամենաբազմազան կուսակցութեանները, արհմիութեանները յերիտասարդական սեկցիաների, յեկեղեցական կազմակերպութեանները

և այլ ներկայացուցիչներ: Հոնտոնները հայտարարում ելին, վոր պատերազմը արդյունք և միմյանց հետ մրցող իմպերիալիստական պետութեանների հակաութեանների:

Յերը կառավարութեանը նոր որենք եր պատրաստում դեմոկրատական իրավունքների ու ազատութեանների լիկլիդացիայի վերաբերյալ, այսպես կոչված «պաշտպանութեան որենքը», ամբողջ Անդրիասում ծավալվեց բողոքի հուժկու ալիք: Ամենալայն մասսաների ճնշման տակ կառավարութեանն ստիպված եր հանել այդ որինագիծը և սրատրաստել մի այլ, ամէլի «մեղմ» որենք:

Նոյեմբերի սկզբին Լոնդոնում կայացավ Քաղաքացիական ազատութեանների համար պայքարող ազգային միութեան կոնֆերանսը, վորին մասնակցեցին արհմիութեանների, լեյբորիստական կուսակցութեան, խաղաղութեան միջազգային շարժման, լեբերալ Ֆեդերացիայի, կոոպերատիվ գիլդիաների, կոմունիստական կուսակցութեան և այլ ներկայացուցիչներ: Կոնֆերանսը վճռականապես բողոքեց քաղաքացիական ազատութեանների վրա տեղալիայի սկսած վտանգութեան դեմ:

Մի ամբողջ շարք բանաձևերում, նամակներում, արտահայտութեաններում անդլիական աշխատավորները խորին համերաշխութեան են հայտնում պատերազմի՝ Փրանսիայում ձերբակալված հակառակորդներին: Համերաշխութեան շարժումն ընդգրկում և ամէլի ու ամէլի լայն մասսաներ: Այսպես, որինակ, 1939 թ. դեկտեմբերի վերջին Յոքլիլի կոմսութեան մեջ կայացավ արհմիութեանական կոնֆերանս, վորին մասնակցում ելին 25 հազար աշխատավորների ներկայացուցիչներ: Կոնֆերանսը զիմեց Փրանսական դեոպանին Լոնդոնում, պահանջելով արատութեան տայ Փրանսական բանվոր դատակարգի դեկավարներին, վորոնց բանտ և նետել Դալարդեյի կառավարութեանը:

Լեյբորիստական կուսակցութեան տեղական բազմաթիվ խումբեր զիմում են կուսակցութեան դեկավարութեանը, կոչ անելով բողոքել Փրանսական կառավարութեանը պառլամենտ ընտրված դեպուտատների ձերբակարման դեմ:

Սոցիալ-դեմոկրատական «Դեյլի Հերալդ» լրագիրը և արհմիութեանական լրագրերը հարյուրավոր նամակներ են ստանում ընթերցողներից, վորոնց մեջ վրդովմունք և արտահայտում Փրանսական կառավարութեան տեոքիստական դործողութեանները դեմ: «Ռեյնոլդս Նյուս» լրագրի մի ընթերցողի նամակում իմիջի այլոց ասված և. «Փրանսական կոմունիստների հետապնդումները և այն փաստը, վոր հանրապետական Իսպանիայի 200

գինվոր հետ են ուղարկված հայրենիք, ակամայից հարց են առաջացնում. այս ի՞նչ դեմոկրատիա յե, վոր նման բաներ ե թույլ տալիս իրեն: Յեվ սա՞ յե այն ազատությունը, վոր մենք պետք ե պաշտպանենք»:

Մի այլ ընթերցող գրում ե. «Յես թույլ կտամ ինձ հարցնելու անդլիական լեյբորիստական կուսակցությանը՝ ինչո՞ւ վոչ ստորին պալատում, վոչ ել լեյբորիստական կուսակցության մեջ բողոք չի լսվում Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության ցրման դեմ»:

Անգլիական գաղութներում պատերազմի ե ուղղմական տեղորի դեմ մղվող պայքարի չարիի մասին կարելի յե դատել միայն այն աղքատիկ տեղեկությունների հիման վրա, վոր վերաբերում են պատերազմի հակաուսկորդ անձերի ու կազմակերպություններին: Հասարակայնությանը մեծ դժվարությամբ ու մեծ ուշացումով են տեղեկություններ հասնում անդլիական գաղութների հակապատերազմական շարժման մասին: Այսպես, որինակ, կոնգոնի «Նեյլի Ուրկլըրը» միայն նոյեմբերի կեսին կարողացավ հաղորդել Բոմբեյում հոկտեմբերի սկզբին տեղի ունեցած բողոքի գործադուլի մասին ընդդեմ պատերազմի:

Քաղաքական այս գործադուլին կոմունիստները ղեկավարությամբ մասնակցել են ավելի քան 90 հազար բանվոր: Այս գործադուլի կազմակերպումը կապված եր հակայական դժվարությունների հետ: Վոչ մի լրագիր չեր ուղում հայտարարություն տալել գործադուլի մասին: Քաղաքի բոլոր տպարանատերերը հրաժարվում եյին գործադուլի կոչ անող թուղթիկներ ու պրակատներ տպագրել: Մեծ դժվարություններով հաջողվեց տպագրել 10 հազար թուղթիկ:

Կոմունիստական կուսակցությունը թուղթիկ ժողովներ եր կազմակերպում Բոմբեյի զանազան ուսյուններում, կոչ անելով աշխատավորներին գործադուլ անել ընդդեմ պատերազմի: Թեև կոմունիստական կուսակցությունը միայն միջանի հետտորներ ունի Բոմբեյում, այնուամենայնիվ գտնվեցին հարյուրավոր աշխատավորներ, վորոնք կարողացան բացատրել մասսաներին պատերազմի իսկական բնույթը ե հրավիրել նրանց պայքարելու նրա դեմ: Բանվորական թաղամասերում արագորեն այս ու այն կողմ եյին սուբում հեծանիսներ՝ ղեկին ամրացրած կարմիր զրոշակներով, ե հեծանվորդները լողունգներ եյին բաց թողնում, վորոնք գործադուլի կոչ եյին անում: Տները պատերին յերևացին

գիշերը գրված կարճ լողունգներ, վորոնք կոչ եյին անում պայքարելու իմպերիալիստական պատերազմի դեմ:

Գործադուլի նախորդակին Դեյլի-Ռոդում կայացավ միտինգ, վորին մասնակցում եյին ավելի քան 10 հազար մարդ: Այս միտինգում հետտորները հայտարարեցին. «Միտինգ գործադուլը կարող ե հանդել մի շարաթվա աշխատավորի կորստյան: Բայց յեթե մենք չմասնակցենք գործադուլին ընդդեմ այս պատերազմի, ապա մենք կկորցնենք վոչ միայն մի շարաթվա աշխատավորը, այլև կյանքներս»:

Մի հետտոր հայտարարեց հավաքվածներին. «Երեսուսական առյուծը մեզ ասում ե. հանիր մեզ այս վորձանքից, սիրելի վոչխար, ե մենք քո բարեկամները կլինենք: Բայց մենք շատ լավ հասկանում ենք, վոր վորձանքից ազատվելով՝ առյուծը կուլ կտա մեզ: Մենք պատրաստ պիտի լինենք ել ավելի խոր հրելու առյուծին այն փոսի մեջ, ուր նա ընկել ե, հող ու ավազ լցնելու վրան, արժանի թաղում պատրաստելու շահագործող կայսրությանը»:

Ժողովից հետո ջահերով յերթ տեղի ունեցավ բանվորական թաղամասերի փողոցներով:

Հետևյալ օրը՝ 1939 թ. հոկտեմբերի 2-ին տեղի ունեցած բողոքի գործադուլն անցավ մեծ հաջողությամբ: Գործադուլավորներն այնքան շատ եյին, վոր քաղաքի փողոցներում յերթևեկող վոտսիկանական գինված պահակախմբերը չհամարձակվեցին հանդես գալու նրանց դեմ: Այդ օրը փակվեցին 40 գործարան ե ֆաբրիկա: Բարձրագույն դպրոցների ուսանողներն իրենց համերաշխությունը հայտնեցին բանվորների հետ, բոլոր բարձրագույն դպրոցները փակված եյին:

Գործադուլի օրը կայացած մասսայական մի ժողովում բանաձև ընդունվեց, վորի մեջ ասվում եր. «Ժողովը ներկայիս պատերազմը դիտում ե իբրև մարտահրավեր բանվոր դասակարգի միջազգային համերաշխությանը ե հայտարարում ե, վոր բոլոր յերկրների բանվորների ընդհանուր գործն ե՝ հաղթահարել իմպերիալիստական դավադրությունն ընդդեմ մարդկության»:

* * *

Աձում են հակապատերազմական տրամադրությունները ԱՄՆ-ում:

Ահավաքիկ մի որինակ, վորն ակնառու ցույց ե տալիս այդ տրամադրությունների աճումը: Կալիֆորնիայում նավաստիները

արհմիութիւնը թուուցիկ հրատարակեց, վորտեղ լուրջապէս ան-
ջաղբեց՝ «Յանկիները չեն գա» (1914 թ. ամբողջ Ամերիկան յեր-
զում եր «Յանկիները կզան» ռազմական յերգը)։ Ուրիշ խոսքով՝
Ամերիկայի աշխատավորները թույլ չեն տա պատերազմի մեջ քա-
ջելու իրենց։ Այս թուուցիկը հաղորդվեց զանազան ռազմական-
ներով։ Միքանի որում այդ ռազմականները 5 հազար նամակ
տոացան կալիֆորնիայի 500 զանազան քաղաքներից ու ամաննե-
րից, վորոնց մեջ բերկրանքով հալանութիւն եր տրվում կալի-
ֆորնիայի նավաստիների լուրնազին։

«Ամերիկայի աշխատավորներն ու գործազուրկ յերիտասար-
դութիւնը չեն ուզում նոր պատերազմում թողանութի մտի դեր
կատարել, կովելով Ուոլլ-ստրիտի իշխանութիան համար», —աս-
ված ե ԱՄՆ կոմյերիտմիութիան մի կոչում։ Տասնյակ ժողովնե-
րում ու կոնֆերանսներում այս հայտարարութիան հետ համե-
րաշխիւցին աշխատավոր յերիտասարդութիան, ուսանողութիան,
յերիտասարդ ինտելիգենտների ներկայացուցիչները։ Ուսանողու-
թիան մեջ անցկացված անկետան ցույց տվեց, վոր 11 ուսանողից
10-ը դեմ են պատերազմին։

Ընդդեմ Յեւրոպայի իմպերիալիստական պատերազմի, ընդ-
դեմ ԱՄՆ պատերազմի մեջ գրավելու՝ ռեակցիոններնրի ե Ուոլլ-
ստրիտի գործակալների ձգտման են արտահայտվում նաև արհ-
միութիւնների անդամները։ Արհմիութենական բազմաթիւ ժո-
ղովներում բանաձևեր են ընդունվում, վորոնց մեջ մատնանշվում
ե, վոր պատերազմող յերկրներից վոչ մեկը ամերիկայի ժողո-
վրդի համակրանքը չի վայելում ե վոր Ամերիկայի մասնակցու-
թիւնը պատերազմին նոր տառապանքներ կրերի բանվորներին։
Մեծաքանակ ժողովներում ու ցույցերում ԱՄՆ կոմունիստական
կուսակցութիան ղեկավարները մերկացնում են ամերիկայի բուր-
ժուազիայի իմպերիալիստական ե ռեակցիոն նպատակները։

Իմպերիալիստական պատերազմի դեմ մղվող շարժմանը հա-
րեցին նաև Ֆերմերները։ 36 շատում մի միլիոնից ավելի անդամ
ունեցող Ֆերմերների միութիւն կոնգրեսի բացմանը նախագահ
Տարերն ասաց. «Ամերիկացի Ֆերմերն ավելորդ դոլլարների հե-
տեից չի ընկնի, յեթե նրանք արյունով են կարմրած»։ Ալբրամ
Նահանգի Ֆերմերների արհմիութիւնը բանաձև ընդունեց,
վորի մեջ պատերազմը անվանված ե «իմպերիալիստական, Ֆեր-
մերների ու բանվորների շահերին հակասող պատերազմ»։

ՄՈՊՐ-ի ամերիկայի սեկցիան լայն կամպանիա յե մղում պա-
տերազմի կապակցութիւնը կոնգրեսի ընդունած տեռորիստական

որենքների դեմ, հանուն քաղաքացիական տարրական իրավունք-
ների։ ՄՈՊՐ-ի մի կոչի մեջ ասված ե. «Անհրաժեշտ ե յեռան-
դուն կամպանիա մղել, վորպեսզի զրոյի հալասարեցվի ռեակ-
ցիայի ընդհանուր գրոհը ամերիկայի ժողովրդի քաղաքացիական
իրավունքների ու ազատութիւնների դեմ, վոր ձեռնարկվում ե
պատերազմական վտանգի պատրվակով»։

Ֆրանսական հետապնդվող կոմունիստների սրաշտպանութիւն
համար ՄՈՊՐ-ը կազմակերպել ե համերաշխութիւն լայն կամ-
պանիա։

ՄՈՊՐ-ի ամերիկայի սեկցիան հատուկ ուշադրութիւն ե
դարձնում ռեակցիայի կողմից հետապնդվող քաղաքապետներին,
վորոնք գտնվում են Ամերիկայում, յեվրոպական յերկրներում,
առանձնապէս Ֆրանսիայում։ ՄՈՊՐ-ի ԱՄՆ սեկցիան ղեկավա-
րում ե հոգուտ իսպանական դադթականների հանդանակութիւն
կամպանիան, վորը շարունակվում ե ե վերջերս ուժեղացել ե։
ՄՈՊՐ-ի ամերիկայի սեկցիայի հուշագիրը, վոր ուղղված ե դադ-
թականների ոգնութիւն վաշինգտոնի կառավարական կոմիտե-
ին, նվիրված ե Ֆրանսիայի համակենտրոնացման ձամբարնե-
րում տառապող 3 հազար գերմանական ե 4·500 չեխական քաղա-
քապետների ե հարյուր-հազարավոր իսպանական դադթականների
վիճակի հարցին։ Հուշագիրը նշում ե, վոր հնարավոր ե նյութա-
կան ոգնութիւն ցույց տալ քաղաքապետներին, ե հարց ե դնում
ազատութիւն հետապնդվող մարտիկների ազատարանի իրա-
վունքի մասին։ Հուշագիրը պահանջում ե, վոր այդ բոլոր քաղ-
աքապետներին միջազգային պասսորտներ տրվեն, վոր նրանց
իրավունք տրվի աշխատելու ե ազատորեն մի տեղից մյուսը փո-
խադրվելու։

Թե վորքան ուժեղ ե համերաշխութիւն դադախարն ԱՄՆ աշ-
խատավորութիւն մեջ, ցույց ե տալիս այն փաստը, վոր միքանի
չարաթում հավաքվեց 53 հազար դոլլար՝ գրավականով ազատելու
համար կոմունիստական կուսակցութիւն ձերբակալված ակաի-
վիստներին։ Բանվորներն ու Ֆերմերները այդ Ֆոնդին եյին գո-
հարերում իրենց վերջին խնայողութիւնները, տալիս եյին իրենց
զարդերը ե նշանի մատանիները։

Վոչ մի տեռոր, վոչ մի հետապնդում չեն կարող խլացնել
միջազգային համերաշխութիւն ձայնը։ Հակառակ բոլոր ռեակ-
ցիոն միջոցառումներին ՄՈՊՐ-ի բերկրական սեկցիան հրապարա-
կով հանդէս ե գալիս ի պաշտպանութիւն հետապնդվող Ֆրան-

սահան կոմունիստների, շարունակում է ժողովներ կազմակերպել և գործունե ողնություն և ցույց տալիս կապիտալիստական բոլոր յերկրները քաղաքարազիրներին: Սկանդինավյան պետութուններում, Կանադայում, Հոլանդիայում, Շվեյցարիայում և Լուքսեմբուրգում անշեղորեն շարունակվում է հեղափոխական հետապնդվող մարտիկների ողնության կամպանիան: Շվեյցարիայում ՄՈՊՐ-ի սեկցիան, մոբիլիզացիայի յենթարկելով լայն մասսաներին, կազմակերպել է ձմեռային ողնության կամպանիա գինավորազրկածների ընտանիքներին, քաղաքարազիրներին և Իսպանիայից վերադարձած շվեյցարացի ազատության մարտիկներին, վորոնք ձերբակալված են կամ հեռացված ծառայությունից:

Նույնիսկ Ֆրանսիայում տեղորը չի կարողացել խեղդել համերաշխության զգացմունքը Ֆրանսական աշխատավորության շարքերում: Սոցիալիստական կուսակցության կենտրոնական որգան «Պոպյուլերը», վորին ղեկավարում է իմպերիալիստական լա-կեյ Բլյումը, ստիպված է հաղորդելու, վոր խմբազրությունն անընդհատ նամակներ է ստանում, վորոնք բողոքում են կոմունիստական մամուլի և կոմունիստական կուսակցության հետապնդումների դեմ: Ամենուրյա մասսայական ձերբակալությունների վերաբերյալ բուրժուական մամուլի անդեկություններից յերե-վում է, վոր ՄՈՊՐ-ի Ֆրանսական սեկցիան շարունակում է հան-զանակությունների կամպանիան, թուուցիկներ է բաց թողնում և կոչ անում միջազգային համերաշխության:

Արյունահեղ պատերազմը, սպիտակ տեղորի խրախճանը չեն կարող վոչնչացնել համերաշխության միջազգային շարժումը: Միջազգային համերաշխությունն ապրում ու գործում է դժվա-րագույն պայմաններում: Կենդանի ու գործունե է մնացել մասսա-ների կամքը պայքարելու ընդդեմ պատերազմի, ուղմական տե-ղորի ու սեակցիայի:

Իսպանական քաղաքներում, վորտեղ բանտերում տառապում են հարյուր-հազարավոր տղամարդիկ, կանայք ու յերեխաներ, պատերին հրեղեն պրերի նման են նորից ու նորից առաջանում հետևյալ մակազրությունները. «Իսպանիան իսպանացիներին»: «Կեցցե՛ հանրապետությունը»:

Ինչպես ահեղ «մանե թեկել», նորից ու նորից են Փարիզի տները պատերին մակազրություններ առաջանում՝ «Կեցցե՛ պայքարն իմպերիալիստական պատերազմի դեմ»: «Կեցցե՛ բոլոր յերկրների բանվորների համերաշխությունը»:

Վ.Ա.ՄԻ ՀՐԱՄՍՅԱԿԱՆԸ

Սարկովի յերկաթուղային արհեստանոցների ՄՈՊՐ-ի ան-կյունը դարդարված է հին մարտական դրոշով: Պատվավոր արյունոտ բծերը դեռ հիմա էլ յերևում են նրա յեզրերին:

Իս Բարսելոնի յերկաթուղայինների դրոշն է: Սարկովի յեր-կաթուղային արհեստանոցների բանվորների համար այդ դրոշը կապիտալիստական աշխարհի աշխատավորության հետ յեղբայ-րական կապի ինկական սխմվոչն է, պրոլետարական ինտերնա-ցիոնալիզմի դրոշը:

Սորհուրդների յերկրի ժողովուրդներին Լենինն ու Ստալինը սովորեցրել են պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոգով: «Ընկեր Ստալինը ամենամահալա պայքար է մղում նացիոնալիզմի ու շովինիզմի դեմ, վորոնք ուժգնորեն բորբոքվում են բուրժուա-պիայի ու նրա իդեոլոգների կողմից: Ինչպես և Լենինը, նա մի-ջազգային պրոլետարիատին և Սորհուրդային Միության աշխատա-վորներին դաստիարակում էր և դաստիարակում է պրոլետարա-կան ինտերնացիոնալիզմի վոգով: Նա սովորեցնում է, վոր սո-ցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ մեջ մի հզոր նեցուկ է կապիտա-լիստական յերկրների աշխատավորության ազատագրական շարժ-ման համար: Նա սովորեցնում է խորհրդային ժողովրդին, վոր այդ հաղթանակն անկարելի կլիներ առանց միջազգային բանվոր դասա-կարգի ոժանդակության: Նա սովորեցնում է, վոր ՍՍՀՄ ժողո-վուրդների հաջողությունները ուժեղացնում են կապիտալիստական յերկրների աշխատավորների դիրքերը շահագործողների դեմ մղած նրանց պայքարում: Նա սովորեցնում է, վոր կապիտալիստական յերկրների աշխատավորության պայքարը դյուրացնում է յոր-հըրդային յերկրի առաջընթացը կոմունիզմի ուղիով: Ընկեր Ստալինի պրոլետարական այս խոր ինտերնացիոնալիզմը կապի-տալիստական յերկրների բանվորներն գգում են ամեն որ: Նրանք Ստալինի մեջ տեսնում են վոչ միայն Սորհուրդային յերկրի ժո-ղովուրդների առաջնորդին, այլև համայն միջազգային պրոլե-տարիատի առաջնորդին, վորն իր բովանդակ կյանքը հատկացրել է նրա նվիրական հույների ու ակնկալիքների իրականացման»:

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ, Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ բանվորներն ու դյուրացիները ղեմում էլին կապիտալիզմի ամբոցների հաղթա-կան գրոհին: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ

1 Իիմխարով, Ստալինը և միջազգային պրոլետարիատը, «Большевик» Ժուռնալ 1940 թ. № 2, էջ 20:

խորհրդային հանրապետութիւնների աշխատավորները քաղաքացիական պատերազմի ու ինտերվենցիայի ժամանակաշրջանում դիտուվին Չարդեցին 14 պետութայն բանակները: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոզով համակված՝ սոցիալիստական մեծ հայրենիքի աշխատավորները նոր աշխարհ կառուցեցին՝ սոցիալիզմի աշխարհը:

Սորհրդային Միութիւնը, վորի միջազգային նշանակութիւնը իր գոյութայն 22 տարիներին ընթացքում անչափելիորեն աճել է, արդեւք հանդիսացավ իմպերիալիստական յերկրորդ պատերազմը համաշխարհային ընդհանուր սպանդանոցի վերածնունդ: Տասնյակ-միլիոնավոր մարդկանց, ամբողջ ժողովուրդների նա ազատեց պատերազմից. տասնյակ-հազարավոր քաղաքական բանտարկյալներ ազատեց Լեհաստանում, Արեւմտայն Ուկրաինայի ու Արեւմտայն Բելոռուսիայի 13 միլիոն աշխատավորներին՝ լեհ կալվածատերերի ու կապիտալիստների ստրուկներին նա դարձրեց Սորհրդային Միութայն ազատ քաղաքացիներ: Նա ոգնութայն յերաջրական ձեռք մեկնեց Ֆին ժողովրդին: Բոլոր յերկրներին բազմամիլիոն մասսաների գիտակցութայն մեջ աշտմ ավելի քան յերբեկեց Սորհրդային Միութիւնը կանգնած է իբրև խաղաղութայն հզոր հետարան, իբրև ուղեցույց ասող հանուն խաղաղութայն բոլոր մարտնչողների համար:

Այն, ինչ 1918 թ. գրել է Լենինը ամերիկայն բանվորներին ուղղած իր նամակում, պահպանել է իր ամբողջ ուժն աշտմ, ե՛լ ավելի մեծ նշանակութիւն է ձեռք բերել:

«Ամբողջ աշխարհի բանվորները, վոր յերկրում էլ նոանք ապրելիս լինեն, վողջունում են մեզ, համակրում են մեզ, ծափահարում են մեզ այն բանի համար, ... վոր մենք, իբրև սոցիալիստական հանրապետութիւն, ... մնացինք իմպերիալիստական պատերազմից դուրս և ամբողջ աշխարհի առջև բարձրացրինք խաղաղութայն դրոշը, սոցիալիզմի դրոշը:

Չարմանալի չէ, վոր միջազգային իմպերիալիստների բանդան ատում է մեզ այս բանի համար, վոր նրանք «մեղադրում են» մեզ, վոր իմպերիալիստների բոլոր լակեյները... նույնպես «մեղադրում են» մեզ: Իմպերիալիզմի այս պահակաշներին ատելութայն մեջ դեպի բոլշեւիկները, ինչպես նաև բոլոր յերկրներին գիտակից բանվորների համակրանքի մեջ մենք նոր վստահութիւն ենք քաղում մեր գործի արդարացիութայն վերաբերմամբ»¹:

Վստահութիւնը մեր գործի իրավացիութայն վերաբերմամբ, բոլոր յերկրներին աշխատավորութայն համակրանքն ու հավանութիւնը խթան են հանդիսանում Սորհրդային յերկրի համար անչեղորեն շարունակելու խաղաղութայն ստալինյան իմաստուն քաղաքականութիւնը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականութիւնը: Լարված ուշադրութայնք են սոցիալիստական պետութայն աշխատավորները հետևում ռազմաճակատի իրադարձութիւններին, ռեակցիայի գործողութիւններին կապիտալի յերկրներում, մասսաների աճող դիմադրութայն իմպերիալիստական պատերազմին: Իմպերիալիստական պատերազմի կառքին լծված ժողովուրդների տառապանքներին ու թշվառութայնը հավասարապես համակրում են Ուրալի ու Գնեպրոպետրովսկի գործարանների բանվորները, արևային Ուզբեկստանի բամբակագործներն ու Ուկրաինայի յերկրագործները:

Հենված ինտերնացիոնալ աճող համերաշխութայնը, ՄՈՊՐ-ը՝ հեղափոխական մարտիկների ոգնութայն այլ մասսայական կազմակերպութիւնը հնարավորութիւն ունի զգալիորեն դարգացնելու իր գործունեյութիւնը: Նա հնարավորութիւն ունի շատ ավելի լայն կերպով ծավալելու ինտերնացիոնալ դասախարակչական աշխատանքը:

ՄՈՊՐ-ի յորհրդային սեկցիան իր գործունեյութայն 17 տարիներին ընթացքում հսկայական նյութական միջոցներ է հավաքել և բանվորական շարժման պատմութիւն մեջ աննախընթաց նյութական ու բարոյական ոգնութիւն է ցույց տվել բանտերի ու համակենտրոնացման ճամբարների քաղաքական բանտարկյալներին, աշխարհի բոլոր յերկրների տասնյակ-հազարավոր քաղտարագիրներին ու նրանց ընտանիքներին: Պանական Լեհաստանի նախկին քաղբանտարկյալների պատմածներն ակնատու կերպով հաստատում են այդ: Լսենք, թե ինչ ասաց բելոռուսական ժողովրդի լավազույն զավակներից մեկը, Արեւմտայն Բելոռուսիայի ժողովրդական ժողովի դեպուտատ ընկ. Պրիտիցկին Ստալինի անվան գործարանի Կուլտուրայի պալատում գումարված ՄՈՊՐ-ի Մոսկվայի ակտիվի ժողովում.

«Թույլ տվեք ինձ շնորհակալութիւն հայտնեքու ձեզ այն ոգնութայն համար, վոր դուք ցույց տվիք մեզ մեր պայքարում, յերբ մենք տառապում էյինք լեհական բանտերի դնդաններում: Զեր ոգնութիւնը մեծազույն նշանակութիւն ունեցավ մեզ համար: Թեև յեհական ռեակցիոն կառավարութիւնը ջանում էր ջլատել ձեր ոգնութիւնը, մենք այնուամենայնիվ այդ ստանում

¹ Լեճիճ, Նամակ ամերիկայն բանվորներին, Յերկեր, հ. XXIII, էջ 180—181:

էյիներ մշտապես: Ձեր ողնությունն ուժ տվեց մեզ անհավասար պայքարում:

Յես ինքս դատապարտված եյի նախ մահվան, իսկ հետո ցմահ բանտարկութեան: Յեւ այն ժամանակ յես առանձնապէս ուժգնորեն զգացի ՄՈՊՐ-ի ողնությունը, աշխատավորների ողնությունը»:

Արեւմտյան Ուկրաինայի ժողովրդական ժողովի ղեպուտատ, նախկին բատրակուհի, հեղափոխական գործունէութեան համար, ՄՈՊՐ-ի շարքերում աշխատելու համար միջանի անդամ ձերբակալված Մարիա Սոլյակը նույն ժողովում պատմեց. «Թեև յես ինքս աշխատում եյի ՄՈՊՐ-ում և նույնիսկ իմ աղքատիկ աշխատավարձի մի մասը զոհաբերում եյի, վորպէսզի ողնեմ նրանց, ուլքեր պայքարում են բանվորների և դյուղացիների ազատագրութեան գործի համար, յես այնուամենայնիվ չբխեցի, թե ինչ է ՄՈՊՐ-ը, ինչպիսի հսկայական ողնություն է ցույց տալիս նա բանտի վանդակի հետեւ նստած հեղափոխականներին, մինչև վոր յես ինքս ծանոթացա բանտի հետ: Բանտում մենք նյութական ու բարոյական ողնություն էյինք ստանում: Յես յերբեք չեմ մոռանա այդ յերջանիկ րոպէները: Բանտի պատերը, վոստիկանությունն այլևս այնպէս սարսափելի չէյին թվում. յես այնքան ուժեղացա, վոր ինձ թվում էր, թե աշխարհում չկա այնպիսի ուժ, վորը կարողանար կտարել ինձ»:

ՄՈՊՐ-ը հսկայական գումարներ է ծախսում Սորհրդային Միություն յեկող քաղտարագիւրների պաշտպանութեան վրա: ՄՈՊՐ-ի միջոցներով ստեղծված են բազմաթիւ հանդուստան տներ քաղաքական տարագիւրների ու նրանց ընտանիքների համար: Նա մահացած ու հետապնդվող հեղափոխական մարտիկների զավակների համար կազմակերպել է մի շարք մանկատներ:

«Յեւ ահա, մենք Սորհուրդների Յերկրումն ենք, միջադպային առաջին մանկատանը,—ասված է յերեխաներ Երիկ, Երգա, Եմմա և Թերեզա Ն-երի նամակում, ուղղված ՄՈՊՐ-ի Կենտկոմին:—Այստեղ կան աշխարհի բոլոր յերկրների հեղափոխական մարտիկների յերեխաներ: Հաճախ մեզ այցելում են ՄՈՊՐ-ի սեկցիաների պատվիրակներ: Այն հարցին, թե վորն է բանի կարիք չենք զգում արդոք, մենք ուղղակի խոսք չենք գտնում պատասխանելու: Յեւ իրոք, մենք ապրում ենք մի ընդարձակ, արևոտ տան մեջ, միասնական, սերտորեն շաղկապված ընտանիքում: Յերբ առաջին անգամ գալիս ես այս տունը, իսկույն ծանոթանում ես տղաների ու աղջիկների հետ և սկսում ես ուսուցնել»:

խոսքեր սովորել: Այս ընդհանրութեան մեջ այնքան էլ չի դպացվում ծնողների բացակայութեանը, վորոնք արտասահմանում պայքարում են կապիտալիզմի դեմ, հանուն համաշխարհային հեղափոխութեան: Մեզ դատախարակում են կոմունիստական վորդով, վորպէսզի մենք կարողանանք փոխարինել մեր ծնողներին: Մենք պետք է շարունակենք մեր հայրերի ու մայրերի գործը, թեթևացնենք բոլոր յերկրների աշխատավորների կյանքը և կոմունիզմ կառուցենք: Այժմ մեր խնդիրն է սովորել «զերազանց»: Մենք ամբողջ ուժով աշխատում ենք անել այդ»:

Մեծ են ՄՈՊՐ-ի նախաձեռնները, բայց մենք պետք է ավելին ձեռք բերենք: Ժամանակակից միջադպային դրությունը, ռեակցիայի, սպիտակ տեռորի անդուսպ իրախճանը՝ պատերազմող ու չեզոք յերկրներում Սորհրդային Միութեան ՄՈՊՐ-ի առջև ավելին ու ավելի պատասխանատու խնդիրներ է դնում: Այս խնդիրները նա կհաղթահարի միայն այն ղեպուտատ, յեթե նրա ինտերնացիոնալ դատախարակչական աշխատանքն ընդգրկի բնակչութեան նորանոր յավեր, յեթե զգալիորեն աճի ՄՈՊՐ-ի անդամների թիվը և դրանով իսկ նրա նյութական հնարավորութեանները:

ՄՈՊՐ-ի անդամներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի վորդով դատախարակելն անխղիւրորեն կապված է խորհրդային հայրենասիրութեան վորդով դատախարակելու հետ: Ամբացնել սոցիալիստական պետութեան հզորութեանը, բարձրացնել նրա պաշտպանունակութեանը՝ ահա ինտերնացիոնալ համերաշխութեան մեծ գործի, ՄՈՊՐ-ի գործի իրականացման կարևորագույն պայմանը:

Անհրաժեշտ է այնպէս դատախարակել ՄՈՊՐ-ի անդամներին միլիոնավոր մասսաներին, ՄՈՊՐ-ի ակտիվիստներին, վոր նրանք իշենց համար սրտովի գործ համարեն կոմունիզմ կառուցողները, սոցիալիստական հայրենիքի պաշտպանների առաջավոր շարքերում գտնվելը:

ՄՈՊՐ-ի կազմակերպութեան մեջ գրավել նորանոր միլիոնավոր մարդիկ, նրանց մեջ արմատացնել իրենց միջադպային պարտքի զիտակցութեանը, ուժեղացնել ողնությունը կապիտալիստական յերկրներում հետապնդվող հեղափոխական մարտիկներին, ամբացնել ու ընդարձակել միջադպային իրապրը դասակարգային յեղբայրների հետ, վորոնք ծանր պայքար են մղում պատերազմի, տեռորի ու ռեակցիայի դեմ կապիտալի յերկրներում՝ այս է ժամի հրամայականը: Կասկածի յնթակա չէ, վոր Սորհրդային Միութեան մեջ ՄՈՊՐ-ը Անիսի—Մտալինի կուսակցութեան ղեկավարութեամբ պատվով կկատարի այդ հրամայականը:



Ներածություն	3
Պատերազմը և տեոորը	4
Փաստեր, միայն փաստեր	12
Պայքար պատերազմի և սաղմական տեոորի դեմ	30
Ժամի հրամայականը	43

Փաբղմ. Մ. Զախարյան
 Խմբագիր Բ. Ն. Դավթյան
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
 Սրբագրիչ Հ. Դոլուխանյան
 ոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավիտե լիտոգր Վ. 116Զ, հրատ. № 820

Պատվեր № 125, տիրաժ 5000

Թղթի չափսը 60×92¹/₁₆ (33.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)

3 տպ. մամուլ 1 ¹/₂ թերթ թուղթ:

Հանձնվել է արտադրության 7/IV 1940 թ.

Ստորագրվել է տպագրելու 26 AV 1940 թ.

Դինը 50 կ.

Քաղաքական զբաղանության պետական հրատարակչության տպարան,
 Յերևան, Ալլահվերդյան № 65

«Ազգային գրադարան



NL0201637

ԳԻՆԸ 50 Կ.

В. ПИК
МЕЖДУНАРОДНАЯ СОЛИДАРНОСТЬ
ПРОТИВ ВОЙНЫ, РЕАКЦИИ И ТЕРРОРА

Государственное издательство политической литературы
Москва ● 1940